

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ


Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ



Գ Ա Շ Ն Ա Կ Ց Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Ի Ն

ԵՒ

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ի Ն

(Կ ա գ մ ա կ ե բ պ ա կ ա ն ա գ զ)

Հ. Յ. Գաղնակցութեան առաջիկայ Գ-րդ Ընդհանուր ժողովի առիթով՝ նպատակադրմամբ դատուց պաշտօնական օրգանի միջոցով անել հետևեալ ծանուցումը.

1) Ժողովի տ ե ղ ի և Ժ ա մ ա ն ա կ ի մասին հարկաւոր տեղեկութիւնները կարելի է ստանալ կենտրոնական մարմիններից, կազմակերպական ճանապարհով:

2) Նոյն կենտրոնական մարմիններին է ուղարկւած «Օրակարգը», տարածելու ուր հարկն է:

3) «Օրակարգի» մէջ ցուցակագրւած բոլոր կէտերի վերաբերմամբ՝ մարմիններն ու խմբերը, համաձայն մեր «Կանոնների», պէտք է տան իրենց ներկայացուցիչ-պատգամաւորներին մանրամասն ցուցումը— հրահանգներ, չը մոռանալով փոքր ամասնութեան կարծիքներն ևս, որպէսզի կուսակցաժողովի մէջ արտայայտեն մեծամասնութեան տեսակէտների հետ միասին՝ նոյնպէս և փոքրամասնութեան հայեացքներն ու տրամադրութիւնները:

4) Բոլոր մարմինները հրաւիրուած են պատրաստել և ուղարկել լրացուցիչ գրամական հաշիւներ, որպէսզի կազմակերպութեան 1904—1906 թւականի գրամական վիճակը պատկերացւի անթերի, իր ամբողջութեամբ:

5) Ժողովի քննութեան առարկայ պիտի լինեն, «Օրակարգի» կէտերից դուրս, ինչպէս այլևայլ մարմինների, այնպէս և անհատ-ընկերների առաջարկները: Հետևաբար նրանք, որոնք ունին այդպիսիները՝ պէտք է պատրաստեն վաղորօք և Ժամանակին առաջարկեն Բիւրօներին, Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար:

6) Համաձայն «Օրակարգի» Գ-րդ յօդուածի, ընդհանուր ժողովը պիտի զբաղւի «կարգապահական և դրամական զեղծումների քննութեամբ»: Այդ պատճառով՝ յատկապէս խնդրուած ենք բոլոր մարմիններին, մանրամասնօրէն և անաչառութեամբ արձանագրել ամեն տեսակ զեղծումները— դիսցիպլինային, կազմակերպական, թէ դրամական—և Բիւրօների միջոցով ներկայացնել Ընդհանուր ժողովին, որպէսզի կազմակերպութեան բարձր ատենի քննութիւնից չը վրիպի ոչ մի դէպք, ոչ մի փաստ, որը կարող է վնասել կարգապահական գործին, կազմակերպութեան առաջիկայ գործունէութեան և յեղափոխական գաղափարին:

ԴԻՄԱԳԻՐ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆ

»Յարմար մօմենտներից մէկը մօտենում է, և հետևաբար անհրաժեշտ է, որ գերբերը որոշւին: Ո՞ւր են, ուրեմն, Օսմանեան կայսրութեան հետ կապած յեղափոխական-գիմադրական տարրերի ծրագիրները, նրանց քաղաքական պահանջները, որոնց ներդաշնակելն ու համախմբելը՝ քաղաքական հեռատեսութեան հըրամայական պատւերն է»:

Այդ հարցն էր, որ մենք առաջադրեցինք «Դրօշակի» անցեալ համարում, և այդ նոյն հարցն է, որ պարտք ենք համարում կրկնել այսօր: Դէպքերը օր օրի վրայ ստանում են հրամայական կերպարանք — երկրի մէջ վիշտն ու բողոքը ուռչում, բազմապատկուում են. Երլզըզի գաղտնարանների մէջ՝ Մարգասպանի մարեղու երկիւղն և յոյսը աճում է բոպէ առ բոպէ. իսկ սահմանագլխի վրայ, թէ Ռուսաստանի, թէ Պարսկաստանի և թէ Բալկանեան փոքրիկ պետութիւնների կողմից՝ նոր հովերի, նոր հոսանքների պլէքները զարկում են սուլթանական պետութեան կիսախարխուլ պատերին այնպիսի ոյժով, որ փոթորիկի նախանշան պիտի համարւի...

Քաղաքական այդ նպաստաւոր տագնապի հանգէպ՝ բոլոր գիմադիր և յեղափոխական տարրերը՝ թիւրք, հայ, ալբան, մակեդօն, յոյն, քիւրդ, չեքքեզ, մի գերագոյն պարտք ունեն կատարելու, — պատրաստ լինել, պատրաստ՝ ծրագրով, պատրաստ՝ տաքտիքով, պատրաստ՝ շարժւելու, պատրաստ՝ զարնելու...

Սին գանգատները, ողբն ու կոծը լրագրական էջերում, ներքին թշնամութիւնն ու պառակտումները — յեղափոխական ազատ եր շեն, և ոչ էլ լուրջ սպառնալիք՝ թշնամուն վախեցնելու: Հարկաւոր են միաձոյլ, գործնական, խորտակիչ միջոցներ. անհրաժեշտ է յեղափոխական քայլ ու մարտական ծրագիր...

Այդ վճռական քայլի նախապատրաստութեան համար՝ լաւագոյն ճանապարհը այն է, որ փորձւած է շատ անգամ և շատ երկրներում, — խորհրդակցութեան կոչել բոլոր դժգոհ խմբերը, գիմադրական թէ յեղափոխական, և մի ընդհանուր կօնգրէի մէջ մշակել օրւայ անյետաձգելի պահանջները, որոնք պէտք է ներկայացնելին Օսմանեան վաղվայ կառավարութեան, ինչպէս և այն գործնական միջոցները, որոնցով պէտք է ստիպել գործադրելու այդ պահանջները:

Օսմանեան կայսրութեան տանջող բոլոր ժողովուրդների ծոցից դուրս եկած քաղաքական գիմադիր խմբերի այդ կօնգրէն — օրւայ պահանջն է, քաղաքական տարրական հեռատեսութեան թելագրանքը, որից խոյս տալ կարող են միայն նրանք, որոնք ոչ ծրագիր ունին, ոչ հանրային նպատակ, ոչ էլ սօցիալական իդէալը:

«Դ Ր Օ Շ Ա Կ Ի» Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

ՎԱՆ, հոկտեմբեր 14

Շատախի մէջ կառավարութիւնը ձեռնարկեց մոր խուզարկութիւնները: Այդ նպատակով ոստիկաններ և զինուորներ ուղարկւել են թէ Վանից և թէ Բիթլիսից: Խուզարկութիւնները ապարդիւս անցան: Արդիւմքը հեռագրւած է Կ. Պօլիս, սակայն կենդրոնական կառավարութիւնը զաղտնօրէն կրկնել է իր հրահանգը՝ խմբական ձեռքակալութիւններ ամել՝ ինչպէս և լիմի: Քաղաքական տանջանքներին աւելացաւ սովի վտանգը: Ուտելիքը սպառւած է. սերմացու անգամ չը կայ: Գիւղեր կամ՝ ամբողջապէս դատարկւած: Սովամահ լիմիու դէպքեր են եղել: Ամառը ըծիմը հասցրել է երկիրը վերջիմ ծայր քայքայմամ ու թշւառութեամբ:

ԹԻՖԼԻՍ, հոկտեմբեր 19

«Հայրենասիրական խմբերի» կազմակերպումը առաջ է տարւում մեծ հոսանքով: Նրանց ծրագրները կառավարական հովանու տակ են, մրամց ժողովները՝ զօրքի պահպանութեան ենթակայ: Երկիւղի և անհամազստութեան աղբիւրը՝ այժմ իսկական ոռւս մարդիկն են, որոնք կառավարութեան հրահանգների գործադրողներն են: Դրանք են թէ պալատի և թէ ժամդարմական վարչութեամ զաղտնի խորհրդականները, ինչպէս և կառավարութեան թեկնածուները՝ դումայական առաջիկայ ըմտրութիւնների ժամանակ: Լուր կայ, որ Վօրօնցօվ-Դաշկօվ յետ է կանչւում, և մրապաշտօնը պիտի յամծնի նախկին զինուորական միմիսոր Կուրօպատկիմին:

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Է

Նամակ «Դրօշակիմ»

Անոք, մեր միապետական և քաղքեների կառավարութիւնները, պատմութեան առջև կը կրեն իրենց ոճրի պատիժը: Պատմութիւնը անոնց դուռնատ ճակատին պիտի դրոշմէ շիկացած երկաթով՝ իրենց անամօթութեան խարանք: Եւ ապագայ սերունդները, երբ մարդկութեան տարեգրութիւնները թղթաւեն՝ անոնց ազնուութեան արտոնները փնտռելու նպատակով, պիտի բռնւին սարսափէ և ամթէ, գտնելով այդ էջերուն մէջ լուսաւարութեան մեծ գարին վերջերը, գահիճներու և գահճական մանկալակներու սերունդ մը, — բստմեկի սերունդը թագակիրներու, որոնք իրենց անզգայութեամբ, անտարբերութեամբ կամ մեզսակից հաճոյակատարութեամբ՝ գործակից եզան երկու հարիւր հազար մարդկային էակներու գարշելի և հրէշային կոտորածին:

Ու անոնց ոճիրը կը շարունակւի, անոնց հաճոյակատար մեզսակցութիւնը կը վերանորոգւի, անոնց անարդ անզգայութիւնը կը մշտնջենաւորի: Եւ այն վայրերու մէջ, ուր հմայիչ բնութիւնը կը թւի թէ մարդկանց խաղաղ երջանկութեան պիտի նախագահէ, մարդակերպ գաղանի անգուլմ հրամաններու համեմատ՝ ամեն օր նոր և սոսկալի շարագործութիւններ կը կատարւին. պետութեանց կառավարութիւնները կը լռեն. անոնց լիազօրները կարմիր սուլթանի նախասենեակներու մէջ կը սպասեն բնդունելութեան այն ժամին:

երբ իրենց ազգայիններուն պատույ նշաններ կամ երկաթուղու մենաշնորհներ պիտի բաշխէ:

Իհնո այս ալ հերիք չէր: Բաւական չէր որ Փոքր-Ասիոյ լեռներուն մէջ հայ ժողովուրդը Աբգիւլ-Համիդի սրիւնարբու և վայրագ պաշտօնեաներու ձեռքով շարժարեւի, խողխողէ: Անդին կայ բարբարոս և վայրագ կառավարութիւն մը, կառավարութիւն ճնշման, խաւարի, ցեխի և արեան, որ Յարիզմէն է: Եւ ցարիզմն ալ իր կարգին՝ կը մահացընէ միւս ու խիղճը հայ ժողովուրդի մէկ հատուածին, ժողովուրդ մը, որ կրկնակի գժբաղդ է, ժողովուրդ մը, ամէն կողմէն սոսնահարած ու վշուած, ճգմած Համիդեան մ աւր ճի և Յարական ս աւ լի միջև:

Բայց ճակատագիրը ուզեց, որ տմարդիօրէն հայածուած այս ժողովուրդը ոգևորուի իր ապագային վերաբերմամբ՝ անխափառի համազումով և դիմադրական հիացուցիչ ուժով մը: Ձինք պաշարող աղէտներու դէմ նա հերոսաբար կը պայքարի, և այդ կերպով հնար կուտայ, որ լուսագոյն և երջանիկ օրերը հասնին:

Այդ օրերը հեռու չեն: Եւրոպայի քաղաքական կացութիւնը կը փոխուի: Ռամկավարութիւնը համաշխարհային առաջդիմութիւններ կ'ընէ: Սօցիալիզմը՝ անդադրում մը՝ զուտով կը բարձրանայ դեպի իշխանութիւն: Անգլիայի մէջ աշխարհակալութիւնն է, որ կը տապալի. Ֆրանսայի մէջ յետադիմութիւնը կրած է այնպիսի պարտութիւն մը, որ զայն մշտականապէս դեանահար բրած է. Գերմանիոյ մէջ երեք միլիոն սօցիալիստներու քուէները՝ Հոհենցօլերնի ռազմասիրական քմահաճոյքներու դէմ իրենց վետօն կը դնեն. Ռուսաստանի մէջ ցարիզմը կը փլչի: Հրապարակ կու գայ ն որ Եւրոպա, ռամկավար, խաղաղուէր և սրբար: Եւ անոր գահակալութեան առաջին գործը պիտի լինի հատուցման գործը.— ժողովուրդները՝ վերջապէս ազատուած իրենց բանապետներէն և տէր իրենց ճակատագրերուն՝ պիտի կարկառեն իրենց ձեռքը հայ ժողովուրդին, որ կրկնակի նահատակ է, և զայն պիտի փրկեն:

ԷԳԳԱՐ ՄԻԼՇՕ

Պրոֆէսոր Ժոզեֆի համալսարանի

ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՕՆԳՐԷԻ ԱՌՁԻՒՆ

Խաղաղութեան համաշխարհային XV-րդ կօնգրէն գումարեցաւ Միլանի մէջ, սեպտեմբեր 15—22-ը, նահագահութեամբ Թէոֆոր Մօնէտայի, որ Եւրոպայի մէջ խաղաղութեան մտքի և իտալիոյ մէջ հայկական դատի առաջին պաշտպաններէն մէկն է:

Կօնգրէին կը մասնակցէին Ֆրանսայի, Անգլիոյ, Միացեալ-Նահանգներու, Գերմանիոյ, Բելգիոյ, Դանիոյ և ուրիշ երկիրներու պատգամաւորները: Ներկաներու մէջ, որոնց թիւը կը հասնէր մի բանի հարիւրի, կը գրանդէին հայկական հարցին բազմաթիւ պաշտպաններ: Մեր բարեկամ Պիեր Քիյարը կը ներկայացնէր «Եւրոպայի Հայ ռուսանդական միութիւնը»:

Այդ կարևոր ժողովի բացման առթիւ «Գորշակի» խմբագրութիւնը կօնգրէին ուղղեց հետևեալ հեռագիրը:

Միլանի կօնգրէի բացման առթիւ խաղաղութեան մարտի ներկայացուցիչներուն կ'ուղարկենք, յանուն Հ. Յ. Գաշնակցութեան, սիրալիր ողջաններ: Ցաւալի է որ մարդկային այն մեծ գաղափարը ցարդ վտանգուած կը մնայ շատ մը պատճառ-

ներով, որոնց մէջ և հայկական հարցը, որը՝ հակառակ միջազգային դաշնագիրներու և պետութեանց հանդիսաւոր խոստումներու՝ 28 տարիներէ ի վեր դեռ կը մնայ միջազգային խաղաղութեան համար մշտական սպառնալիք: Շնորհիւ թիւրք կառավարութեան բռնած բնթայքի՝ մեր երկրի վիճակը անտանելի կը դառնայ: Ջարգեր, թալաններ, հարստահարութիւններ, բռնի կրօնափոխութիւններ, արտագաղթ, սով և ցեղային կռիւ Հայաստանը կ'աւերեն: Իրերու ներկայ վիճակին վերջ տալու միակ միջոցը՝ յեղափոխութեան դէմ կուրի չէ, որը արդի պայմաններու մէջ իրաւացի շարժում մ'ըն է, այլ գործադրութիւնը խոստացած բարենորոգումներու՝ հիմնուած արդարութեան և ցեղային համերաշխութեան վրայ: Խաղաղութեան կօնգրէն՝ այս մըտքով որոշումներ տուած է իր վերջին ժողովներուն մէջ, ուր հայկական հարցը դրւած էր մեր քաջարի բարեկամ Պիեր Քիյարի կողմէ: Լիայոյս ենք, որ Միլանի կօնգրէն, հաւատարիմ այն մեծ գաղափարին, որուն ներկայացուցիչն է, անգամ մ' ևս ձայն պիտի բարձրացնէ ի նպաստ մեր ժողովուրդի՝ ուժ տալով Լօնդօնի Միջազգայնական խորհրդագրովի պահանջին՝ զնելու համար հայկական հարցը Լահէյի կօնգրէին առջև: Հայ ժողովուրդը, ինչպէս բուր հարստահարած ժողովուրդները՝ ջերմ ցանկացող է խաղաղութեան, հիմնուած արդարութեան, ազատութեան և քաղաքակրթութեան մեծ գաղափարներու վրայ»:

Երկրորդ նիստին մէջ Պիեր Քիյարը, այժմեական հարցերու յանձնարարի անունով, որուն ինք տեղեկաբերն էր, առաջարկեց բանաձև մը, որը կը համապատասխանէր, քիչ տարբերութեամբ, անցեալ տարի Լիւցէրնի մէջ ընդունուած որոշման: Հռետօրը մի սիրուն ճառի մէջ պաշտպանեց իր առաջարկը՝ դիտել տալով, որ եթէ սկզբունքով խաղաղասէրները պարտաւոր են բողոքել տկարներու հարստահարութեան դէմ, այդ պարտականութիւնը աւելի ևս պիտի շեշտուի քանի որ գոյութիւն ունին միջազգային դաշնագիրներ, ինչպէս Բերլինինը, որոնք յաւակնութիւն ունին ապահովել հայերու հանգստութիւնն և պատիւը՝ Եւրոպայի երաշխաւորութեամբ, խոստացած քառորդ դարէ մ' ի վեր: Ապա ճառախօսը պարզեց թիւրքաց Հայաստանի ներկայ կացութիւնը, ուր դանդաղ ոչնչացման սիստեմը կը մշտնջենաւորի՝ և յիշեց վերջին տարիներու ամենէն գարշելի դէպքերը,— Ալվառինջի կոտորածը, հայ գիւղացիներու իրաւազրկութիւնը, բանտերու ըէժիմը: Գիտել տուաւ, թէ պետութիւններէն պահանջել՝ որ հայերու համար ընեն ինչ որ ըրին նուազ կարևոր շահերու պաշտպանութեանը համար (օրինակ — Ֆրանսական, իտալական, աւստրիական, անգլիական միջամտութիւնը թիւրքի մէջ՝ պահանջներուն գանձման կամ հպատակներու պաշտպանութեան համար) չը նշանակէր խաղաղասիրական մտքէն հեռանալ: Եւ ի վերջոյ ցոյց տուաւ, որ ռուսաց Հայաստանի մէջ նոյն սիստեմը կը գործադրուի ինչ որ թիւրքաց Հայաստանի մէջ, և ցարի կառավարութիւնը՝ դրւած նոյն պատճառներով ինչ որ սուլթանը՝ կը հանդիսանայ իբրև հայ ժողովուրդի անողոր հալածող:

Ցաք վիճաբանութիւններէ յետոյ, որուն մասնակցեցան քանի մը երկիրներու պատգամաւորները, խաղաղութեան կօնգրէն քուէարկեց հետևեալ առաջարկը.

«Հայաստան. Խաղաղութեան միջազգային 15-րդ կօնգրէն կը բողոքէ տկար ժողովուրդներու յՎրայ ի գործ դրւած բոլոր ճնշումներու դէմ, որոնք ի գործ կը դրւին ազգային իրաւունքներու և պետական շահերու պատրուակի տակ. և նկատելով որ չը կայ իսկական խաղաղութիւն, եթէ

անիկա չէ հիմնած արդարութեան և միջագային
խոսաուսմներու յարգանքի վրայ,

Բարձրաձայն կը յայտարարէ՝ որ Բերլինի գաշ-
նագիրը ստորագրող պետութիւններու հրամայողա-
կան պարտականութիւնն է, վերջապէս, գործադրել
ոտալ նոյն դաշնագրի 23 և 61 յօդուածներով կան-
խատեսուած և 1895-ի մայիսեան յիշատակագրով
սահմանաւորուած բարենորոգումները:

Համագումարը՝ իր ջերմագին համակրութիւնը
կուզէ Անդրկովկասի կոտորածներու զոհերուն,
ինչպէս նաև լեհական հրէաներու և առհասա-
որակ բոլոր քաղաքներու ոռու զոհերուն:

Կը հռչակէ ոռու կառավարութեան ոճրալի ըն-
թացքը, ինչպէս նաև միւս կառավարութիւններուն,
որոնք յանցաւոր են նոյնանման չարագործութիւն-
ներու մէջ:

Բանաձևը ընդունեցաւ միաձայն, և յեղա-
փոխական խոհերէն հեռու՝ խաղաղասէրներու ժողովը
գարձեալ մի անգամ միացուց իր ձայնը այն բազմա-
թիւ բողոքներուն, որոնք կը կազմեն հայկական դատի
բարոյական ոյժը:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Ն Ա Մ Ա Կ Տ Ա Ր Օ Ն Է Ն

Մ Ո Ւ Շ, օգոստոս 1

Քիչ էին կարծես ժողովրդի ցաւերը, թիւրք ճան-
պէզարներու խուճմն ալ սկսեց արիւն հոսեցնելը: Անոնք
արդէն քաղաքի մէջ հրէշային կազմակերպութիւն ու-
նին, որու նպատակը—միմիայն հայ երբ կ'ոտ ո-
ւելն է: Անոնց գրգռմով, յուլիսի սկիզբները, 'սչէ
պին Սասո, Մահմուտ պին Հասէ և այլ քրդեր գի-
շերը յարձակեցան Սասնոյ Տափիկ գիւղի հայերէն
Գրգօ Արզունեանի տան վրայ, առեանգեցին Ներսէսի
կին Կուլօն, Մանուկի կին Շամամը, վիրաւորեցին գըն-
դակահար Գրգօեան ՕՏանը և եղբայրը, առաջինը՝
Թէէն, իսկ երկրորդը ոտքէն տարին 1 ել և 2 գառ
ու ջրաղացի գործիքներ: Երկու կիներն ալ բրգացուցին:
Տափիկ մէկն է այն գիւղերէն, ուր զօրանոց կայ...
»հանրային ապահովութեան» համար:

Յուլիս 26-ին՝ գարձեալ ճանպէզարներու գրգռմով՝
Քրգագոմցի Ըմբը անուն ոճրագործ քիւրդը և իր 12
ընկերները իրիկան ժամը 2-ին՝ յարձակեցան
Նորշէնի (հայ կաթուղի) վրայ. աշկարա կը մտնեն
գիւղին երեւելիներէն Մելքոնեան Սողոյի տունը, կը
բռնեն Սողոն՝ ընտանիքի անդամներու ներկայութեան՝
խօփփաբար կը յօշոտեն. կը կտրեն գլուխը և գրան
սեմին վրայ կը ջախջախեն, յետոյ կը յարձակին քիւ-
մալեան Նեմիկ անուն երիտասարդին տան վրայ ու
գնդակահար կը սպաննեն Նեմիկը ու հայուջներով կը
մեկնին:

Յուլիս 27-ին կրկին ճանպէզարները կը յարձակին
քաղաքին մօտակայ Գասնի գիւղին վրայ, գնդակահար
կը սպաննեն Մանուկ Աւետոյեան անուն հայը, որ գիշե-
րը կ'աշխատէր իր արտի մէջ: Կ'անցնին Ծափնայ գիւղ

և հոն գնդակի կ'ենթարկեն ու կալի մէջ կը վիրաւո-
րեն Ախճանցի Ապաճանը:

Յուլիս 27-էն սկսեալ ճանպէզարներու յարձակումը
կը շարունակէի, որով և գիւղացիները կը ստիպւին
ինքզինքնին պաշտպանել: Մշոյ մէջ սաստիկ խուզար-
կութիւն կը կատարուի, զօրքերու ջոկատներ քաղաքը
տակն ու վրայ կ'ընեն ֆէդայիներ փնտաելու պատըր-
ւակով: Ս. Կարապետի հարեան գիւղերէն եօթ-ութը
կարեւոր հայեր այս անգամ ձերբակալուելով բանտարկ-
ւեցան: Բազմաթիւ անձեր, որոնք զէնքի պատճառով
ամբաստանուած են, ձերբակալուելու կը հետամտին: Ժո-
ղովուրդը նորէն սարսափի մատնուած է, ինչ անելիքը
չը գիտեր: Մարտը արտերու մէջ մեծ աւեր է արած.
Աղքատ դասակարգը կը մտածէ գաղթել Տիարպէքի:

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ա - Ք Ր Ի Ա Կ Ա Ն Մ Ր Յ Ո Ւ Մ Ն

(Պիթլիսի կուսակալութեան օրհանգիստի մէջ)

Մ Ղ Ն Ր Դ, օգոստոս 2

Ղարզանի այժմու գայմագամը նկատելով՝ որ իր գա-
ւառակին պետական հասոյթները տարւէ տարի կը նը-
ւազին, գիւղերը կ'ամայանան, ժողովուրդը կը ցրւի և
մասամբ բնաջինջ կ'ըլլայ՝ սո՛սկ Բէնճինար աշիրէթի
պետ Պշար աղային, իր եղբայրներուն և կարգ մը ա-
ւազակ ցեղապետներուն ինքնիշխան տիրապետութեան
և բռնութեանց երեսէն, հլքի հնարք մը գտնելու
համար, կամ աւելի ճիշտը՝ իր թօշակներուն կանոնա-
ւոր գանձման եղանակ մը խորհելով՝ մեծ աշիրէթա-
պետ ու կողոպտիչ սուլթանին և անոր հաւատարիմ
ծառանքի միւշիր Զէքի և նահանգին կուսակալ դժո-
խածին Ֆէրիտ փաշաներուն կը դիմէ և գարման տա-
նիլ կը խնդրէ: Սուլթանը, եթէ ո՛չ ժողովուրդին ան-
զորութեան, գէթ «պետութեան վտանգուած շահե-
րուն պահպանման համար» կը հրամայէ Պշարը ձեր-
բակալել՝ իր համախոհներով հանդերձ: Ասոր համար
Պիթլիսէն երկու գունդ զօրք լեռնային երկու թնդա-
նօթներով ու առատ ռազմամթերքով կը հասնին Ղար-
զան, ուր իրենց կը միանայ նաև Պիթլիսի Ալայ-պէյը
300-է աւելի սիյարաներով: Ապրիլ 17-ին կոխ մը
կը սկսի Այնգասը գեղին մօտ, ուր ապաստանած էր
Պշար, իր 40—50 արբանեակներուն հետ: Զօրքէն կը
սպաննելի հարիւրապետ մը, չափուշ մը և երկու նէֆէր՝
Քրդերու կողմէն անձի կորուստ չը կայ:

Հարիւրապետին և միւս սպաննալներուն արիւնը,
բնականաբար, աւելի պիտի գրգռէր հրամանատար
մարմինը, եթէ սակայն գրամական մեծաբանակ կաշառ-
քով մը չը սիրաշահէր այս վերջինը: Պշար այլևս իր
առջև փախուստի լայն ճամբայ մ' ունէր և գիշեր մը՝
իր երեք եղբայրներուն ու ծառաներուն հետ մէկ տեղ՝
ապաստանարանէն ելլելով՝ ուղղակի Սասնոյ և ապա
Մոսկանի լեռները կը բարձրանայ իր գլուխն ազա-
տելու կամ աւելի լաւ է ըսել՝ Համիդին քաղա-
բականութիւնը և անոր անզօր իրատէներն հեգ-
նելու համար: Զօրքն ու սիյարան, թէև անա-
մօթաբար միշտ կը հետապնդեն զանոնք, բայց ան-
կարելի կ'ըլլայ անոնց հասնել, և մինչդեռ իրենք Սաս-

նոյ Սեպուհի քարուտ լեռները կը դեգերէին յոգնած ու վատակարեկ, ահա Պշարի Սղերդէն հազիւ մէկ և կէս ժամ հետո Չանթըք գիւղին մէջ ըլլալը կը լսուի: Այնտեղ կը փութայ միւթէսարըրը՝ փաշան խումբ մը ձիաւոր և հետեակ զօրքերով, բայց նա կողոպտելով նոյն կողմէն անցնող կարաւանը և գրաստներուն վրայ հեծցներով իր հետիոտն ծառաները՝ շունչ կ'առնէ Միրան աշիրէթի Համիդիէյի գայմագամ Ապտիւլ Քէրիմ փաշային մօտ, որմէ օգնութիւն ու պաշտպանութիւն կը գտնէ պէտք եղածէն աւելի: Իրողութիւնը ստուգելէ յետոյ Ալայ-պէյը իր զօրքերով ճիգրէի մօտ փաշային վրանները կ'երթայ և օրինաւորապէս կը պահանջէ չարագործներուն յանձնելը: Աւելորդ է ըսել, որ տրւած պատասխանը ժխտական կ'ըլլայ: Երբ զըզէն նոր-նոր իրատէներ կ'ելլեն չարագործներուն յանձնումը հրամայող, բայց այդ ամեն ձայն բարբառոյ յանապատի կ'անցնին:

Յոգնութենէ, անքնութենէ և մանաւանդ հեղձուցիչ տապերէն բոլորովին քայքայուած ու ընդարմացած՝ Ալայ-պէյը և Ղարղանի գայմագամը 20 օր ի զուր սպասելէ յետոյ, հիւանդութեան պատրւակին տակ, իրենց հետեակներով խումբ-խումբ կը վերադառնան Սղերդ՝ սըրտաբեկ ու գլխիկոր: Այս պահուն, մինչդեռ Ալայ-պէյը հիւանդութեան անկողնոյ մէջ գամուած կը հեծէ, գայմագամն ալ իր հրաժարականի վրայ կ'որոճայ, Պշար աղան իրեններով պաշտպան աշիրէթին հետ՝ զօղանի պաղօրակ ջուրն, սերն ու կարագը, կատարեալ հանգիստ ու ապահովութիւն կը վայելէ՝ ժպիտը դէմքին և սրտին:

Աւելորդ է ըսել, որ Պիթլիսի կառավարութեան հեղինակութիւնը զերօր իջած է և կրնանք սնանկ հըռչակել զայն: Ո՛չ միայն Պշար աղային, այլ և ամենէն աննշան քրդին հանդէպ անզօր ու ապարդիւն մնալու դատապարտուած են կառավարական ամեն փորձ ու ճիգ, անանկ որ այսօր քրդական աշխարհին մէջ կատարեալ անիշխանութիւն կը տիրապետէ: Ամեն օր, ամեն ժամ, ամեն տեղ, նոյնիսկ կառավարութեան աչքին առջև սպաննութիւն, թալան-կողոպուտ, հարստահարութիւն կը գործւին ու կը գործւին յայտնի աշկարայ ու անպատիժ կը մնան:

Քանի մ' օր առաջ Մէհմէտ Պշար աղային տղան Ապտին օր արևով երեք քիւրդ սպաննեց, անոնց հետ ունեցած անհամաձայնութեան պատճառաւ: Մօտ տասն օր առաջ Խաթմա ըսւած գեղին մէջ երկու հայ կը սպաննուին և չորս ասորի ծանրապէս կը վիրաւորւին տեղացի քրդերու կողմէ: Ոճրագործները ձերբակալելու և պատժելու որևէ շարժում մը չկայ: Կառավարութիւնը պարզապէս կը վախնայ և կ'զգուշանայ քիւրդին հետ չափւելու, քաջ համոզուած ըլլալով որ չը պիտի կրնայ անվնաս դուրս գալ որևիցէ դէպքէ: Թարմ ապացոյց մը: Ասկէ քսան օր առաջ, Սղերդէն քիչ մը հեռու Ալանզօք գիւղը ապաստանող 3—4 հոգիէ բաղկացած էշգըյաններու խումբը ձերբակալելու կ'երթան 30 սիյարա՝ իրենց յինապետին առաջնորդութեամբ: Արգիւնքը աս կ'ըլլայ, որ չորս նէֆէր զոհ տալով կը վերադառնան, սև մուրի արատ մ' ալ գրօշմելով իրենց կառավարութեան ճակտին:

Նոր լուր հասաւ, որ հայ մը և իր կինն իրենց գոր-

ծով Քօձիպ Այնգասը երթալու միջոցին՝ ճամբան, գաւառակին անդորրութեան և ժողովրդին պաշտպանութեան հսկող երեք զինուորներու կը պատահին. ասոնք անասնաբար ու անողորբէն նախ կը բռնաբարեն խեղճուկ կնիկն և ապա հետերնին առած՝ շէյխին բով կը տանին և կը բռնագատեն որ կրօնափոխ ըլլայ, բայց կինը անդրգուշի մնալով կը յաջողի տուն դառնալ...

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ

ՍԱՄՍՈՆ, օգոստոս 25

Հակակառավարչական ցոյցերու բանի մը դէպքեր տեղի ունեցան թիւրք տարրին մէջ: Ընչուս թիւրք ժողովուրդը շատ քիչ է ընդունակ՝ հարստահարութեան և բռնութեան դէմ բողոքելու և գործնականապէս բան մը ընելու և ահա այդ պատճառաւ պզտիկ դէպքերն ալ կարեւորութենէ զուրկ չը պէտք է համարել:

Երկու շաբաթի չափ առաջ, Պօլսէն նաև մը եկաւ Տրապիզոն՝ մէջը ունենալով Համիդի թիկնապահներէն մէկը, և անկէ մինչև նեղուցը՝ այլ և այլ սեղերէ զօրք առնելով հասաւ Պօլիս: Զինուորները, որ 1400 հոգի էին, Եմէն պիտի տարւէին: Սակայն 3—4 օր առաջ Պօլսէն Տրապիզոն դարձեցան, և նաև, որ մութին հոս հասած էր, հակառակ սովորութեան, գիշերը չը պարպեցին, վախնալով որ մութէն օգտւելով՝ փախչողներ կ'ըլլան. կըսուի թէ զինուորներ Եմէն երթալ չուզելով՝ նաևուն մէջ ապստամբած, նաւապետը և Համիդի թիկնապահը ծեծած և բանտարկած են: Լուր կայ որ այս դէպքը շատ գայրացուցած է սուլթանը: Տեսնելով այս անօրինակ ցոյցը, նա կը հրամայէ, որ թնդանթի բըռնեն նաև, սակայն պալատի մէջ այս սքանչելի իրատէին առաջը կ'առնեն, նաևուն մէջ անմեղներ ալ գտնելիլ պատճառ բերելով: Սակայն անմեղի համար մտածողն ո՞վ է: Իրողութիւնն այն է, որ ատանկ քայլ մը խոշոր սխալ կը համարւէր, իբրև զժգոհութիւնը աւելցանելու նոր առիթ: Այս նոր զինուորները զօրքով շրջապատուած՝ դէպի Կարին փոխադրեցին և կըսուի թէ ցամաքով պիտի տանին Եմէն: Եմէն խրկեած զօրքերուն տասն տոկոսը ողջ չէ մնացած և ասիկա ծանօթ է բոլոր թիւրքերուն: Ի՞նչպէս համաձայնէին երթալ տեղ մը, ուր միայն մահը կը սպաննար իրենց:

Էրզրումի մէջ շախսի վերկին (անհատական տուրք) չը վճարելու մտադրութիւնը կը շարունակուի. նոր կուսակալին այս մասին ըրած ջանքերը արդիւնք մը չը տւին. կառավարութիւնը շատ կասկածանքով կը նայի Էրզրումի թիւրք տարրի վրայ և որոշած է ժանդարմին ոչ-էրզրումցի տարրերէ կազմել. հրաման եկած է Տրապիզոնի շրջանակէն 450 ձիաւոր և հետեւակ ժանդարմ ժողովել և արդէն սկսած են արձանագրել:

Վեց շաբաթ առաջ Պօլսէն 6 հատ փաշաներ Սամսոն դուրս հանւեցան՝ Պաղտատ արքայի շահար: Լուր կայ, որ հակակառավարչական են:

ՀԱՍԻԴԵԱՆ ԲՈՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓԱՍՏԵՐ

(Եւրոպացիի մը նամակէն)

ՏՐԱՊԻՉՈՆ, օգոստոս 14

Թիւրք բռնաւոր կառավարութիւնը թիւրք անխելք խուժանի հետ միացած՝ կը շարունակէ իր հայաստանում գործունէութիւնը: Ահա նոր ապացոյցներ:

Մայիսի 24-ին իրիկունը, երբ Տրապիզոնի Ղանա գիւղի Ծինկիլա թաղի բնակիչ Յովակեան իր տուն կը դառնար, յանկարծ բովի կաղնուտէն կը հասնի հըրացանի երկու գնդակ և երիտասարդը կը գլորի գետին: Ոճրագործը չէ գտնած և չի գտնիր ալ, որովհետեւ կառավարութիւնը ոչ մի գրական շանք չի ընկրատոր համար: Այդ զոհին յանցանքն այն էր, որ բիչ շատ բարեկեցիկ և կորիճ երիտասարդ մ' էր: Համիդի երկրին մէջ միայն փշացած տարրեր կրնան հանգիստ ապրիլ ով որ իբր մարդ ապրելու ձգտում ցոյց կուտայ, նա կը հանդիպի կամ կառավարութեան և կամ խուժանի հարւածին:

Յունիսի 23-ին Տրապիզոնի վարի Զէֆանօզ գեղը, խոտերու վրայ նստած՝ գուլպա կը հիւսէին ու կը խօսակցէին օդափոխութեան համար գեղ եղած հայ կիներ և օրիորդներ: Մէյ մ' ալ յանկարծ կը տեսնեն իրենցմէ մին, օրիորդ Սուսիկեան, գետին կը տապալի: Պատճառը: Տրապիզոնի պէյերէն՝ Շաթըր զաղէ Վաֆֆէթ, Նաւան և Արի պէյերը, ուրիշ կարգ մը թիւրքերու հետ, բիչ առաջ հոնկէ անցած էին գնդակ արձակելով: Ասոնք երբ կը հասնին Զէֆանօզի գլուխը՝ Սօփուգսու ըսած տեղը, չը յագենալով մինչև այդտեղ արձակած գնդակներէն, այդ գագաթէն կը սկսին ուղղակի գեղի վրայ կարկուտի նման թափել հրացանի գնդակները: Սօփուգսուի մօտ եղողները կը փախչին կը պատսպարուին, իսկ քիչ վարը գտնուող հայ կիները զիրենք վտանգէն հեռու կարծելով, անհոգ նստած կ'աշխատէին, և սակայն բարբարոս՝ մեռնելու ալ դատապարտուած պէյին գնդակը հասաւ և գետին փռեց հէգ աղջիկը, որ այրի մօրը մէկ հատիկ յոյսն ու ապաւենն էր աշխարհի մէջ և նոր նըշանուած էր երիտասարդի մը հետ: Նոյն գիշերը կը վերջանայ դժբախտ օրիորդին կեանքը դառն ցաւերու մէջ: Ոստիկանութիւնը առանց ամաչելու յուզարկաւորութիւնը կը լրտեսէ՝ հասկանալու համար թէ ժողովուրդը ի՞նչ աստիճանի համակրութեամբ պիտի վերաբերուի հէգ զոհին: Կառավարութիւնը և բոլոր քաղաքացիք լաւ գիտեն, թէ որոնք են ոճրին հեղինակները, սակայն ոչ ոք ձերբակալեցաւ: Չեւկանութեան համար միայն՝ թաղելուն երրորդ օրը՝ կառավարութիւնը դիակը գերեզմանէն հանել տուաւ և երեք պաշտօնեայ ալ գեղ շրկեց՝ իբր թէ քննութիւն կատարելու տեղւոյն վրայ և ասով վերջացաւ ամեն բան:

Մի բանի շարժաթ առաջ, քանի մը թուրքեր կը բարձրանան նոյն Զէֆանօզ գեղէն մէկ ժամ վեր գտնուող կրօնի կողմէն բլուրը, և օդին մէջ բաւական զընդակներ արձակելէ յետոյ, ասով չը գոհանալով, հըրացանները կուղղեն մօտիկ եղող եկեղեցիին պատուհաններէն ներս և բոլոր կանթեղները կը փշրեն,

դուռը և ամեն բան կը ծակծկեն... Այս ալ հաճոյք մը բարբարոսի համար:

Նաւամատոյցի հայ ճամբորդներու յանձնաժողովին նախագահ՝ հաղարապետ Նէճիպ պէյ՝ 4—5 տարի հայերը կողպակելէ վերջը՝ պաշտօնազուրկ կ'ըլլայ և հրաման կը տրուի իրեն վան երթալ: Սակայն մարդը իրեն հետ գործ ունեցող հայերուն արիւնը քամելով 7—8000 օսմանեան ոսկի դիզած էր. ի՞նչպէս կրնար Պոլսէն շրկել և վան երթալ: Իբր թէ իր ընտանիքը Պոլիս խրկելու համար նաւ կ'երթայ և այլևս նաւէն դուրս չելլալով՝ Պոլիս կ'իյնայ, և հիմայ կը լսենք թէ գողացած ոսկիներու շնորհիւ վան գնալու խնդիրն փակած՝ լաւագոյն տեղ մը կ'երթայ: Այս անխիղճ մարդը հայերէն այնքան կաշառք ուտելէն յետոյ, չամցցաւ առանց վճարելու՝ հայերէ և քանի մ' ալ օտարներէ փոխ առած 2—300 ոսկին՝ փախչել ասկէ. ոմանք փախչելէն յետոյ հեռագրեցին պատերազմական մինիստրին, սակայն մեղք հեռագրին դրամներուն: Նէճիպ պէյի տեղ Պոլսէն խրկեած է հարիւրապետ մը, սակայն ասոր ինչ տեսակ մարդ ըլլալը դեռ չէ յայտնուած:

Յուլիս 25-ին գիշերը, միւլազիմ (փոխ հարիւրապետ) Իպրահիմ պէյի տունը հիւր կ'երթայ իր դրացի նաւավար Պետրոս Տէօքմէճեան իր 12 տարու տղուն՝ Տիգրանի հետ: Հիւրին հետ միասին բաւական խմելէ յետոյ, տանտէր Իպրահիմ պէյ իր զինուորական կարողութիւնը ցոյց տալու համար, օդին գաւաթը կը դնէ խեղճ տղուն գլխուն վրայ և նշան կ'առնէ, զընդակը կը վրիպի և կը ծակէ գագաթը, և հիմա հէգ տղան ծանր վիճակի մէջ պառկած է և ազատելիլ կասկածելի: Այս ողբերգութիւնը կը կատարուի տան մը մէջ և շատ հաճոյք կը պատճառէ Համիդի կորիճ սպային, որ կառավարութեան հալածանքէն ազատ ման կուգայ, քանի որ զոհը հայ մ' է:

Ասկէ երկուք ու կէս ամիս առաջ, Պոլիս, թիւրք մը ոստիկանութեան ցոյց կուտայ երկու յոյն երիտասարդներ, իբր թէ ասոնք են այն հայ տղաքը, որ ասկէ 11 տարի առաջ կրակ ըրին վանի նահանգապետ Պահարի փաշային վրայ: Անմիջապէս երկու յոյները կը ձերբակալուին, նոյնպէս այն թիւրքը որ ըրած է յայտնութիւնը: Թիւրքը կը մեռնի Պոլիս բանտին մէջ և միւս տղաք հոն 40 օր պահելէ յետոյ, ամիս մը առաջ հոս կը բերուին: Տղոց մէկը Սամսոնցի Եալաբազի օղլի Փավլաքիին քրոջ որդին է՝ Պօտոսաքի անունով, միւսն ալ մարզանցի է: Անկարելի եղաւ ազատել այս յոյն տղաք, թէ և կառավարութիւնը կը համոզուի թէ ասոնք հայ չեն, և այս բոլորը՝ ոստիկանապետին ուզած 30 ոսկի կաշառքը չը տրուելուն համար... Օգոստոսի 9-ին մարզանցի տղան ալ կը մեռնի բանտը: Ասոր վրայ միւսի՝ Պօտոսաքիի քեռին Փավլաքի ահագին աղմուկ կը հանէ և կառավարութիւնը վախնալով կ'արձակէ Պօտոսաքիին՝ երաշխաւոր մը առնելով: Աւերորդ կ'ըլլար յայտնել որ իբր Պահարի փաշային վրայ կրակ ընողներ 11 տարի առաջ պատերազմական տեսանք անիրաւ տեղը դատապարտեց և տակաւին բանտը կը մնան ուրիշ երկու հայ տղաք՝ Յակոբ Գահուէճեան և Արմենակ Գասպարեան: Համիդեան արգարութիւն:

Բ Ո Ղ Ո Ք

Ուղղած Հալէպի ամզիական հիւպատոսին

(... երեւ բաներու 38 քաղաքական բանաւիշակներէ)

Վ ս ե ժ ա շ ու ը Տ է' ր,

Օսմանեան կառավարութեան մեր վրայ ի գործ դրած անդադար և անտեղի հարստահարութեանց և բռնութեանց մի հարիւրերորդն անգամ չենք կարող նկարագրել անոնց բազում կողմերու մի մասը ձեր վսեմութեան արգէն ծանօթ է: Չանձրոյթ չի պատճառելու համար և միանգամայն անկարող ըլլալով մեր ներկայ վիճակի զարհուրելի կողմերը իրենց ամբողջութեամբ մի առ մի ի մէջ բերել, կուզանք ներկայացնել ձեր վսեմութեան անոնցմէ միայն մի քանիսը:

Առաջին՝ տարիներով առանց նստարանի և առանց հացի բանտարկեալ կը պահեն, ցիւանս բանտարկեալներու և մահուան գատապարտածներու հետ խառն. հազիւ վեց հոգի տեղաւորող խոնաւ տեղը 12 հոգի բնակեցնել կուտան. հինգ, վեց օրեան հեռաւորութիւն ունեցող տեղերէ այցելութեան եկող մեր ազգականներու առանց մեր երեսը ցոյց տալով՝ սպտակելով և հայհոյելով կը վռնտեն, որով կը զրկուինք անոնց ամենաչնչին նպատակներէն. ինչպէս դուրսը, ուր սովորական է հալածանք, կեղեքում, բռնաբարում և զանազան ճնշումներ, և վիրաւորանք՝ կեանքի, կրօնի և եկեղեցւոյ դէմ, և եւս վսեմ և այլ հայհոյանքներով, հոս ալ նոյնը կ'ընեն, և սպառնալիքներով ամենուս մերկութիւնը պատսպարող ու աչքի զարնող հագուստնիս կը կողոպտեն:

Երկրորդ՝ Բանտի անարգ վիճակը, գորշահոտութիւնը, բժշկի երբէք չ'այցելելը հետզհետէ վատթարացնելու վրայ է մեր ֆիզիքական առողջութիւնը: Եթէ երբէք կրօնական միջթարութիւն տալու համար քահանայի մ' այցելութեան զիմում ընենք, բանտի պաշտօնէութեան լուսանքներով և անարգանք կը պատասխանի, և այսպիսով կը զրկուինք հոգեւորականի այցելութենէն:

Երրորդ՝ Այս բոլորի համար երբ կը բողոքենք բանտի անօրէնին, ամենախիստ կերպով կ'ըսէ. — «Եթէ ձեզ հանգիստ թողելու կամ ապրեցնելու համար հոս բերինք, սպասեցէք անգամ մը, և կը տեսնէք թէ գեռ ինչեր պիտի ընենք ձեզի»: Ամենախիստ կերպով արգելած է մեզ խօսել, գրել, կարգալ, դուրսը գտնուող մեր ազգականներու և բարեկամներու հետ յարաբերութիւն պահել: Այս և առանց նման անարգար ամենախիստ վարմանք, տանջանք և սպառնալիքներ մեզ կը հայեցնեն ու կը մաշեցնեն: Մեզի հանդէպ ձեռք առած այս մեթոտը՝ նպատակ ունի մեզ ոչնչացնել: Վառավարութիւնը հոյ տարրի մէկ մասը գէնքով և սրով կուպաննէ և մի մասն ալ, երբ քաղաքական յանցաւորներ, բանտային ստակալի տանջանքներով կուզէ ջնջել:

Այս ներկայ գրութիւնը ձեզ ներկայացնող 38 բանտարկեալներս, (զանազան տեղերէ) առանց գործէ մը տեղեկութիւն ունենալու և առանց բանաւոր պատճառի՝ հոս, բանտերու անկիւնը կը հիւծենք: 120է աւելի բանտարկեալներուս (երեք բանտի մէջ) վիճակը երթալով սաստկանալու վրայ է, և մենք չ'որ հացի կարօտ ենք: Հակառակ մեր վրայ դրած այսքան խստութեանց, մենք յաջողեցանք ողջ գրութիւնը գրել և կը ներկայացնենք զայն ձեր վսեմութեան, յայտարարելով որ այս վիճակին՝ մեզ մահը կեանքէ աւելի նախանձեղի է:

Արդ ներկայիս, յանուն ճնշածներու օգնող ձեր քրիստոնեայ կայսրութեան և յանուն մարդասիրութեան կը դիմենք պաղատագին ձեզ՝ խնդրելով ձեր կարեկցութիւնը և միջամտութիւնը մեր այս անտանելի վիճակին մեղմացմանը համար, լիայոյս որ ճնշածներուս այս բողոքը անլուրի չի մնար:

1906, յուլիս 25.

(Ստրագրութիւն)

... Ի Բ Ա Ն Տ

Մ Ո Ւ Շ, 10/23 օգոստոս

Լրտեսներու թիւը շատցած է. որեւէ պատրաստութիւն կը մտնեն գիւղեր ու տներ և կողմնակի կերպով հասկնալ կ'ուզեն, թէ ով կայ հոն օտար կամ կասկածելի: Քաղցն ու թշուառութիւնը պաշարած է ամբողջ ժողովուրդը: Մինք կ'օգնենք որչափ կարող կ'ըլլանք: Ծով ցաւի դէմ մեր բաշխումները չնչին են: Կը սպասենք օգնութեան արտասահմանեան հայութենէն:

Աւերիչ հարկահաւաքութիւնը կը շարունակուի Չեռնարկեցին ժողովել և բաքիէն երբ (հին տուրք): Հացը հետզհետէ կը պակսի. գազթը եկող գարնան մեծ չափեր պիտի ստանայ:

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն, 2 սեպտեմբեր

Նորութիւն մը. Օրմանեան պատրիարքին աչքը լոյսիր «կտրուկ հրաժարականը», զոր ետ առաւ, սքանչելի արդիւնք մը ունեցաւ, — հոս հրաման եկած է Պօլսէն, որ բացի Ամերիկայէն և Ռուսաստանէն ուրիշ ամեն տեղ երթալու հրաման տրւի հայերուն, պայմանաւ՝ որ կառավարութեան մէջ յանձնաժողով մը կազմուի, քննելու համար թէ խնդրատուին անձը անպատեհութիւն մը ո՛ւնի իր ուզած տեղը երթալուն համար: Վազմած է յանձնաժողովը երեք անձերէ՝ փօլիսներու և ժանդարմայի պետերէն և նուֆուս նազըրիէն, — երբն ալ կաշառակեր թուրքեր: Արդիւնքը արգէն տեսանք. հոս գտնուող պօլսեցի օրիորդի մը Վ. Պօլիս վերագառնալու համար դիմում եղաւ և տակաւին հրաման չեն տար: Եւ ոչ դիւ ալ՝ հաւանօրէն չեն տար, բաւական սեպելով թղթի վրայ գրուած այս նոր խաբեայութիւնը...

Կ Ո Վ Կ Ա Ս

Ը Ն Թ Ա Յ Ի Կ Դ Է Պ Բ Ե Ր Ը Բ Ա Գ Ի Ո Ւ Մ

Բազու, 16 սեպտեմբերի

Այս տեղ զանազան անուններով զանազան խմբակներ են առաջ եկել: Նախ «Անարխիստական» խմբակը՝ որի գոյութեան առաջին արտայայտութիւնն եղաւ Բ. Գոլուխանեանցի կեանքի դէմ ուղղած փորձը և նրան վիրաւորելը, այն պատճառով որ «բուրժուա» է: Գրանից յետոյ գրանց գործունէութիւնը կայանում է միմիայն սպառնալիքներով փողեր հաւաքելու և քէֆ անելու մէջ: Այս ուղղութեամբ գործում են նաև վերջերս երևան եկած «Բոմբիստ», «Տէրրօրիստ» և այլ զանազան մականուններով, որոնք օր ու ցերեկով կողոպուտով են զբաղւում, նման Ռուսաստանի շատ մասերում երևան եկածներին: Դժբախտաբար այստեղ գտնւածների մեծագոյն մասը հայեր են՝ խառն մի քանի ռուսներով և վրացիներով: Այդ խմբակները այնքան ծայրայեղութեան հասցրին, որ Գաշնակցութեան տեղական կոմիտէն ստիպւած եղաւ գրանց հետեւել ու հալածել և մի քանիսին արգէն զինթափ է արել ու ցրել:

«Վարմիր հարիւրակ» անուն մի խումբ էլ կար, որ կատարեց մի քանի ոստիկանական պաշտօնեաների ահաբեկումներ: Գրանցից վեց-եօթ հոգի ձերբակալւել

են. ձերբակալածներից մէկին ոստիկանատնից բանտ տանելիս ճանապարհին սպանել են, մնացածները ցրել են: Սրանք բոլորն էլ ուսներ են եղել:

Սեպտեմբերի 11-ին, քաղաքի կետրոնական Կրասնափոքսկի փողոցում գտնւած «Սեաստապօլ» հիւրանոցում հաւաքւած են եղել «Կարմիր հարիւրեակի» մի քանի անդամներ և մի խումբ անարխիստներ: Արեւելոյան ժամը 8-ին սկսեց հրացանաձգութիւն, հայկական մասը ընկաւ սարսափի մէջ՝ ենթադրելով որ «պօգրօմ» սկսեց: Հրացանաձգութիւնը տեւեց աւելի քան մի ժամ: Բանից դուրս եկաւ, որ ոստիկաններն ու զինւորները գնում են այդ հիւրանոցներում գտնւածներին ձերբակալելու, որոնք անձնատուր չեն լինում և կրակում ու փախչում են: Ոստիկանութիւնն ու զինւորներն էլ փոխանակ փախչողներին բռնելու կամ նըրանց վրայ կրակելու, հիւրանոցի ծառայողներից մէկին տեղն ու տեղը սպանում են, երբ նա պատասխանում է, թէ փախչողների ո՛չ բնակարաններն է իմանում և ո՛չ էլ գիտէ թէ ովքեր են: Կրակում են փախչող հասարակութեան վրայ և մի քանիսին վիրաւորում: Համալարի են բռնում ամբողջ թաղը, որ մի կողմից Կրասնօփոքսկայա, միւս կողմից Մօլօկանսկայա, երրորդ կողմից Տօրգօվայա և չորրորդ կողմից Բօլշայա-Մօրսկայա փողոցների վրայ է նայում: Համարեա թէ ամբողջ թաղի շինութիւնը պատկանում է մի մարդու, Հասանովին, որի միայն մի տունը այնքան մեծ է՝ որ երեք փողոցով ելք ունի, և հէնց այդ տունը ամեն կողմից համալարի են բռնում: Ոչնչից տեղեկութիւն չունեցող տնկեցները շշմուռ, ահ ու զոգի են ենթարկւում: Յետոյ մտնում են խուզարկելու ամբողջ տունը: Բայց ի՛նչ խուզարկութիւն... կատարեալ թաւան: Մտադրւել են թնդանօթի ևս բռնել, բայց տանտիրոջ միջնորդութեան շնորհիւ՝ խնայել են: Որպիսի՛ մեծ արգարագատու թիւն—արեւածարաւ ոստիկանութեան կողմից:

«Պօգրօմի» և կոտորածի ծրագիրը ստուգւում է նոյնիսկ պաշտօնական աղբիւրներից, և արդէն գիշերները փողոցներում երևում են բերտանկաներով զինւած անձանօթ դէմքեր: Կրակութիւնը ծայրայեղ կրիտիքական է:

ԸՆԿԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Ռ. սօցիալ-դեմօկրատիական բանւորական կուսակցութեան Բագւի մարմնի օգոստոսի 25-ին յայտարարած բնդհանուր քաղաքական գործադուլը վիժեց: Նա սչ միայն չը կայացաւ, այլ նոյնիսկ պատճառ դարձաւ մի շարք թիւրիմացութիւնների և բռնի գործողութիւնների բանւորական բայօններում և հասարակութեան մէջ:

Ալլաքեղ և բազմազան բանւորական մասսաների մէջ արեւան գնով ձեռք բերւած համերաշխութեան դադարաբեր նորից ենթարկւեց լիակրի: Նորից տարածւեցին աղբային և կուսակցական տարածայնութիւններ՝ քաղաքի և բայօնների աշխատաւոր մասսաների մէջ:

Ռ՛վ ստեղծեց այդ դժոխքը. ո՛վ անջատեց հազիւ միացած ու կազմակերպւած յեղափոխական մասսան: Այդ, բնկերներ, նեղ կուսակցական թոյնն է, որով համակւած է Ռ. Ս.-Գ. Բ. կուսակ. Բագւի մարմինը: Այդ կուսակցութիւնը ձեռնարկելով մի այդպիսի լուրջ և պատասխանատու գործի, որպիսին է ընդհանուր քաղաքական գործադուլը, աւելորդ

համարեց նոյնիսկ բանակցելու միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ: Նա սչ միայն չի ջանացել համաձայնութիւն կայացնելու, այլ նոյնիսկ աշխատել է սպառնալիքների տակ ստիպել միանալ գործադուլին միւս յեղափոխական կուսակցութիւնների բանւորութիւնը:

Բագւի մարմնի այդ տակտիկան, մեր խոր համոզմունքով, պէտք է դատապարտւի ամենքից, որոնց համար թանկ են քաղաքականապէս սարկացած և տնտեսապէս քայքայուած աշխատաւոր մասսայի շահերը: Մնւած նեղ կուսակցական փառասիրութեամբ՝ Ռ. Ս.-Գ. Բ. Բագւի մարմինը առաջին անգամը չէ, որ իր կուսակցական շահերը բարձր է դասում բանւորութեան շահերից և ամբողջ ազատագրական շարժումից:

Համարելով այդպիսի վերաբերունքը դատապարտելի և ցանկանալով մի անգամ ընդ միշտ վերջ դնել յեղափոխական տեսակետից փաստակար՝ Բագւի մարմնի այդ կործանիչ տակտիկային, Հ. Յ. Գաշնակ. Բագւի կենտր. կոմիտէն անհրաժեշտ է համարում հրաւիրել միջկուսակցական դատարան, որ կը պարզի օգոստոսի 25-ի ընդհանուր գործադուլը և Ռ. Ս.-Գ. Բ. Բ. կուսակցութեան Բագւի մարմնի վերաբերմունքը դէպի նա: Հրաւիրում ենք մասնակցել միջկուսակցական դատարանին Սօց. Եղափոխականների և Ս.-Գ. Հ. կազմակերպութեան ներկայացուցիչներին: Հ. Յ. Գ.

Բագւի կենտր. կոմիտէ

1906, օգոստոսի 28.
Բ ա գ ու լ.

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

IV *

Հողային խնդիրը ոռակակամ սօցիալ-դեմօկրատների ծրագրում:

Ամեն մի դոգմ, ինչքան էլ առաջին անգամից տարօրինակ թւայ մեր ասածը, իր մէջն օպպօրտիւնիզմի սաղմեր ունի:

Կենդանի իրականութիւնը—բազմերանգ ու բազմաձև—ինչպէս յայտնի է, չի պարփակւում միակողմանի և իսկապէս միշտ մեռած զօգմատիզմի նեղ շրջանակում: Նա, այդ իրականութիւնը շատ էլ չի նայում վերացական մտքի կառուցումներին, ինչքան էլ սրանք ամբողջացած, տրամաբանական ու սիրուն լինեն, և անխնայօրէն փշրում է բոլոր դոգմերը, եթէ մարդը՝ իր դատողութեան ընթացքում՝ հաշի չի առնում կեանքի բարդութիւնը և, ըստ կարելոյն, նրա բազմազան պահանջները: Ինքնավստահ և ինքնահաւան դոգմատիզմը յաճախ մոռանում է այդ, և այդ պատճառով էլ բաւական զգալի «պատակներ» է ստանում կեանքից.—կեանքը ծաղրի է հանում նրան, վայր է գրորում իր սիրուն, բայց անհաստատ գիրքից և թեքում է նրան դէպի իր վաղանցուկ ու յաճախ բռնահաճ պահանջները, և այսպիսով հպարտ դոգմատիկներին դարձնում է օպպօրտիւնիստ: Ձգտելով կենսունակ լինելու սեփական գոյութեան կուլում, գոգմը կորցնում է իր հիմնական գծերը—իր բացարձակ, անողոք և երկաթէ բնոյթը—և ձևափոխւում է յարա-

* Տես «Իրօսւի», N° 8.

չարժ իրականութեան փաստերի հասկացանք, յարմարեցում է որոշ միջավայրի, որոշ պատմական վայրկեանի, որոշ իրականութեան յարաբերութեան առանձնայատկութիւններին: Այս բանը ամենից լաւ կարելի է ստուգել զիտելով այն կախարդական փոփոխութիւնները, որոնց ենթարկեց, վերջին երկուերեք տարւայ ընթացքում, հողային հարցի մեկնութիւնը՝ սօցիալ-դեմոկրատների ծրագրում:

Ինչ էին ասում նրանք ռուս գիւղի մասին առաջ, և ինչ են ասում այժմ: Երեք տարի առաջ ինչ գեր էին տալիս նրանք գիւղացիներին յեղափոխական կուռի մէջ, և հիմա ինչ յոյս են գնում նրանց վրայ: Ինչ էին խոստանում գիւղացիներին իրենց ծրագիր — *minimam* — ով այն ժամանակ և ինչ են խոստանում այսօր: Կարգ ուղղակի ապշում է տեսնելով, թէ ինչ վճռական շրջումն է կատարել նրանց մտքերի մէջ այդ հարցի վերաբերմամբ: Զարմանալի է, թէ երբեմն ինչ հսկայ քայլերով կարող է բարեշրջել «ամբողջացած», ուղիղացած դոգմը անողոր ճակատագրի՝ այսինքն իրական կեանքի հարւածների տակ, որին խաբել չի յաջողում ոչ մի խորամանկութեամբ...

Գիւղացիութիւնը, իր էութեամբ, «յետագիւմական» է: «ապուշ գիւղը» երբեք չի կարող ըմբռնել քաղաքի պրօլետարիատի իդէոլոգիան. գիւղացիները մինչև իրենց ոսկոռի ծուծը ներշնչած են կալաճատիրական, «մանր բուրժուական» բնազդներով, — ուստի կանչել նրանց սօցիալիզմի համար կուռղ «յեղափոխական» պրօլետարիատի շարքերը, կը նշանակէր տարել իսկական ուտոպիայով, «քաղաքական արկածախնդրութեամբ», մի բանգազուշանքով, որ միայն «սօցիալիստ-յեղափոխականներին» է վայել:

Այսպէս էին դատում գիւղացիութեան մասին սօցիալ-դեմոկրատները, հետեւելով երեք աւետարաններին՝ Մարքսի, Էնգելսի և Կառլեկու, այսպէս էին բնորոշում նրանք տարբեր կերպով խորհող մարդկանց: Անշուշտ դուր լաւ յիշում էք այն թունալի ածականները, ինչպէս օրինակ՝ «ուտոպիստներ» — հետն էլ անպատճառ կցած «մանր բուրժուական» — «արկածախնդիրներ», «սօցիալիստ-յետագիւմականներ» (փոխանակ ասելով՝ «յեղափոխականներ», այս մէկը Պլեխանովի սրամտութեան պսակն էր) — ածականներ, որոնք վերաբերում էին սօցիալիստ-յեղափոխականներին, որոնք, ինչպէս գիտէք, մի քիչ ուրիշ կարծիք ունէին «ապուշ գիւղի» գերի մասին՝ ռուս ազատարար շարժման մէջ:

Հարց. ինչ հիմք ունէր սօցիալ-դեմոկրատների այդ վերաբերմունքը դէպի գիւղացին:

Արդիւնաբերական երկրներում, ուր կայ ուժեղ կերպով զարգացած կապիտալիզմ, գիւղացիութիւնն, յիւրաւի, աւելի պահպանողական է քան քաղաքի բանուրութիւնը, և հեշտութեամբ չի ենթարկւում յեղափոխական պրօպագանդին: Այստեղից *a priori* այն եզրակացութիւնը դուրս բերին, որ ուրեմն ռուս գիւղացիութիւնն ևս անպատճառ պէտք է որ յետագիւմական լինի, հէնց միայն նրա համար, որ նա գիւղացիութիւն է և հետեւաբար իր հոգեբանութեամբ պէտք է որ նման լինի բոլոր քաղաքակիրթ երկրների ժամանակակից գիւղացիութեան:

Յետոյ Յայտնի է որ դրամատիւրութեան դասական երկրում՝ Անգլիայում, ինչպէս նաև միւս տիպի դրամատիւրական երկրներում արդիւնաբերութեան և քաղաքային պրօլետարիատի աճումը կատարում էր ի հաշիւ գիւղական մանր անտեսութիւնների անկման և գիւղական դասի աղքատացման: Այստեղից դարձեալ *a priori* այն եզրակացութիւնը հանեցին, որ ուրեմն մեղանում ևս՝ արդիւնաբերութեան և քաղաքների պրօլետարիատի աճումը, ինչպէս նաև բանուրական շարժման յաջողութիւնները ուղղակի պատճառական կապով կապւած են գիւղական մանր անտեսութիւնների ոչնչացման և գիւղի «պրօլետարիացման» հետ: Գիւղացին, ասում էին մեր սօցիալ-դեմոկրատները, պէտք է լիովին կտրւի հողից, պէտք է «եփու գործարանի շոգեկաթսայում», և այն ժամանակ միայն նրա շահերը կը ձուլեն բանուր դասի շահերի հետ, այն ժամանակ միայն նրա առաջ կը բացւեն լայն հեռանկարները լաւագոյն ապագայի, այն ժամանակ միայն նրան հասկանալի ու սրտին մօտ կը դառնայ «պրօլետարիատի իդէոլոգիան», այն է՝ սօցիալիզմը: Իսկ քանի դեռ գիւղացին հող ունի, «սեփականութիւն» ունի, թէկուզ մի ողորմելի հողաբաժին, որի վրայ հազիւ հազ քաշ է գալիս մի կերպ — մինչև այդ, նրա շահերն, իբրև «սեփականատէր դասի» շահեր, «բուրժուական» են և ինչպէս այդպիսին — «անհաշտելի» են արդիւնաբերական պրօլետարիատի շահերի հետ. գիւղացին ամեն տեղ եղել է *status quo*-ի կողմը և սօցիալիզմին հակառակ. այդպէս էլ կը լինի և մեզանում: Ահա, իսկն ասած, այն «հասարակական փիլիսոփայական» տեսակէտ կոչւածը, որ ունէին մեր սօցիալ-դեմոկրատները գիւղի և գիւղացու վրայ՝ Ռուսաստանի նախայեղափոխական շրջանում: Այս հիմքերի վրայ էլ հաստատեց նրանց հողային ծրագիրը՝ մօտիկ անցեալում:

Այդ ծրագրի ծուծը հետեւեալն էր. պէտք է ռուս գիւղի կեանքից հեռացնել այն ամենը, ինչ որ խանգարում է խոշոր հողատիրութեան զարգացման ի հաշիւ մանր հողատիրութեան, ինչ որ արգելք է հանգիստնում «դասակարգերի կուռն» գիւղի ներսում, ինչ որ կասեցնում է «գիւղի պրօլետարացումը»: Իսկ որպէսզի գիւղացիները չը կոտորեն մինչև այն օրհնեալ ըրպէն, երբ կ'իրականանայ «գիւղի օրհնեալ պրօլետարացումը», պէտք է տալ գիւղացիներին... «հողամասեր». Թող ապրեն, ասում են, ի փառս գալիք սօցիալիզմի և նրա բազմիմաստ մեկնաբանների...

Սակայն կեանքը շատ դուր ծիծաղեց այդ, այսպէս ասած, կենդանաբանական սօցիալիզմի վրայ. — կեանքի հարւածների տակ՝ մեր սօցիալ-դեմոկրատները քայլ առ քայլ՝ թէև մեծ շփոթութեան մէջ, յետ էին քաշւում իրենց «առաջակալ», անդր-գիտնական գիրքերից, մինչև որ վերջապէս սկսեցին խօսել «հողի ազգայնացման» մասին... Բանից դուրս եկաւ, որ գիւղացիական մասսան այնքան էլ «յետագիւմական» չէ, ինչպէս այդ մարգարէանում էին ռուս մարքսիստները: Բանից երևաց, որ նրանք դէմ չեն նոյնիսկ յեղափոխութեան, եթէ միայն նա ընթանում է «հող և ազատութիւն» գրօշը ձեռին. երևաց, վերջապէս, որ նրա գիտակցող տարրերը շատ հեշտութեամբ ոչ միայն հաս-

կանում, այլ և իւրացնում են «պրօլետարիատի իդէօլոգիան», այսինքն սոցիալիզմը Եւ ահա սոցիալ-գեմոկրատների գիտակցութիւնը լուսաւորւելու հետ, որ մըթաֆնել էր սոցիալիստ-յեղափոխականների դէմ ունեցած թշնամութիւնից, վերափոխւում է նաև նրանց հայեացքը դէպի գիւղացիութիւնը, ինչպէս դէպի յեղափոխական մի ոյժ, կերպարանափոխւում է նրանց տեսակէտը գիւղումն անելիք պրոպագանդի և ագիտացիայի վրայ, լայնանում է նրանց հողային ծրագիրը:

Գաղափար տալու համար՝ թէ ներկայումս ինչ են մտածում սոցիալ-գեմոկրատները հողային հարցի մասին, մենք կը բերենք մի քանի քաղաքներ ուստական սոց.-գեմ. կուսակցութեան վերջին «միացուցիչ» ժողովի որոշումներից: Ահա թէ ինչ է աւած «Գիւղացիական շարժումը» հատուածի մէջ:

«Նկատելով, որ հողի համար և ոստիկանական բերրոկրատական կազմի դէմ կռիւ մղող գիւղացիութիւնը ներկայումս հանդիսանում է յեղափոխական դասակարգ... ուստ. Ս. Գ. Բ. Կ. միացուցիչ ժողովը որոշում է. 1) ամեն կողմով ներգործել գիւղացիութեան վրայ, կապելու նրա տնտեսական պահանջները՝ ներկայ վայրկեանի քաղաքական խնդիրներին. 2) Ստեղծելով ամեն տեղ, ուր այդ հնարաւոր է, սոցիալ-գեմոկրատական կազմակերպութիւններ գիւղատնտեսական բանւորութեան մէջ, միաժամանակ աջակցել նաև ամբողջ գիւղացիութեան կազմակերպւելուն՝ մի կողմից մտցնելով նրան գիւղացիական միութեան մէջ, որքան որ այդ միութիւնը անկուսակցական կը մնայ, — միւս կողմից կազմել գիւղական կոմիտէներ, գիւղական պատգամաւորների խորհուրդներ և այլն — կապելով սրանց ինչպէս իրար հետ, այնպէս էլ քաղաքի պրօլետարական կազմակերպութիւններին հետ և ձգտելով ազդել նրանց ծրագրի և տակտիկի վրայ սոցիալ-գեմոկրատներին ցանկալի ուղղութեամբ»: *

Ահա և «միացուցիչ» ժողովի հողային ծրագրի ամենաէական կէտերը: Գուրս է գալիս, որ այժմ մեր սոց.-գեմոկրատները պահանջում են.

1) Գրաւել եկեղեցական, վանական, ուղեւային և կաթինետային բոլոր հողերը և պետական հողերի հետ միասին յանձնել տեղական ինքնավարութեան խոշոր օրգաններին, որոնք միացնում են քաղաքային և գիւղական շրջանները:

2) Գրաւել, մասնաւոր սեփականութիւն կազմող բոլոր հողերը, բացի մանր հողաբաժիններից, և յանձնել նրանց ի կարգադրութիւն՝ ռամկավար սկզբունքներով ընտրւած՝ տեղական ինքնավարութեան խոշոր օրգաններին:

Ահա այսպէս է վճռել ինչիւր «միացուցիչ» ժողովը՝ զիջելով կեանքի հզօր պահանջներին:

Այսպէս ուրեմն՝ առաջ «հողամասեր» էին, այժմ դարձան... «գրաւում»:

Չը մոռանանք սակայն ասել, որ սոցիալ-գեմոկրատների «միացուցիչ» ժողովում՝ «մեծամասնու-

* Այս եւ յետագայ բաղաձայնքը մեզ վերցրինք Լեհիցի բրոշուրի յաւելածից, որ կոչւում է՝ «Տեղեկագիր» Ռ. Ս. Գ. Բ. Կ. միացուցիչ ժողովի, Մոսկվա, 1906:

թիւն» կոչող պատկառելի հատուածի ներկայացուցիչները հակած էին իրենց զիջումներով աւելի հեռուն գնալու: Նրանք պնդում էին, որ պէտք է «հիմնել գիւղացիական կոմիտէներ... գրաւած հողերի իրական կարգադրութեան համար, մինչև որ ընդհանուր հիմնադիր ժողովը կը հաստատէ հողատիրական նոր կարգեր». նրանք պնդում էին, որ երբ յեղափոխութիւնը կատարելապէս յաղթանակէ և ռամկավար հանրապետութիւնը հաստատուի, սոցիալ-գեմոկրատները պարտաւոր են «պաշտպան հանդիսանալ յեղափոխական գիւղացիութեան ձգտումներին՝ վերացնելու հողի մասնաւոր սեփականութիւնը և ջանալ բոլոր հողերը դարձնել պետութեան սեփականութիւն. կամ լաւ ևս՝ համայն ժողովրդի ընդհանուր սեփականութիւն»:

Այս արդէն ոչ միայն հողերի «գրաւումն է», այլ և «ազգայնացումը», կամ նոյնիսկ, եթէ կուզէք, «սոցիալիստական», «հողի այն սոցիալիզացան», որ այնպէս յամառութեամբ առաջարկում են սոցիալիստ-յեղափոխականները և որից նոյնքան յամառութեամբ հրաժարւում են սոցիալ-գեմոկրատները: Սակայն սոցիալ-գեմոկրատները առաջապէս համոզւած են, որ թէ հողերի «գրաւումը», թէ նրանց «ազգայնացումը» և թէ «ամբողջ հողը համայն ժողովրդի սեփականութիւն դարձնելը» պէտք է միայն նպաստեն «դասակարգային կուլի ազատ զարգացմանը գիւղում» (ibid.): Այսինքն, ուրիշ խօսքով, նրանք ենթադրում են, որ դասակարգային կռիւր գիւղում անխուսափելի է, որ միևնոյն է՝ գիւղացին պէտք է հողային զբաղակալի գերին դառնայ, որ մինչև իսկ «ամբողջ հողը համայն ժողովրդի սեփականութիւն դարձնելը» չի կարող կասեցնել գիւղի ազգասացումը (պրօլետարացումը): Թէ ինչու և ինչպէս է այդ դուրս գալիս, մենք, ձիշան ասած, հրաժարւում ենք հասկանալ: Եւ այդ տրամադիր ենք կարծելու, որ այստեղ էլ դեր է խաղում հին թիթիմորը, որից նրանք չեն կարողանում հրաժարուել, չը նայած նրանց բոլոր առաջադիմութեանը՝ ուստ կեանքի իրական պահանջներն ըմբռնելու գործում: Եւ ինչպէս հրաժարեն: Մարքսիզմի աւետարանիչները ենթադրում են, որ գիւղը պէտք է քայքայւի, նա պէտք է գնայ կապիտալիզմին ծառայելու և նրանից բան սովորելու: Դէ՛, եթէ նըրանք այդպէս են ենթադրում, եթէ magister dixit, ուրեմն նշանակում է այդպէս էլ պէտք է լինի, և ոչ մի «ազգայնացում» և «սոցիալիզացան» ոչ միայն չեն փրկի գիւղացիութիւնը գրամատիրութեան շղթաներից, այլև, ընդհակառակը, նրան կը բերեն կը հասցնեն «դասակարգային կուլի ազատ զարգացմանը գիւղում»: Մի խօսքով մարդու ճակատի գրածը չի ջնջւի...

Թո՛ղ այդպէս լինի. թո՛ղ սոցիալ-գեմոկրատները շարունակեն միտիթարել, որ իրենց հողային նոր ծրագրով նրանք ամենեին չեն աղարտում. իրենց դոգմի «մաքրութիւնը», առաջապէս հաւատարիմ են մնում Մարքսիզմի հիմնական կէտերին: Կարևորն այդ չէ. կարևորն այն է, — կարևոր ոչ թէ սոցիալիստ-յեղափոխականների ինքնատիրութեան, այլ ուստ յեղափոխութեան

Համար— որ նրանք խոստովանում են հողի «գրաւման» և «ազգայնացման» անհրաժեշտութիւնը. կարեւորն այն է, որ նրանցից շատերը հեռու չեն գիտակցաբար ձրգտելու՝ «հողը գարձնել համայն ժողովրդի ընդհանուր սեփականութիւն»։ Իսկ երբ ժամանակը հասնի, ժողովուրդն ինքը կը որոշէ թէ ինչպէս շահագործէ այդ «ընդհանուր սեփականութիւնը», արդեօք «մասնաւոր սեփականութեան» թէ «ընկերակցական հողատիրութեան» սկզբունքների համաձայն։

Պէտք է, սակայն, աւելացնել, որ սոցիալիստ-յեղափոխականները այնուամենայնիւ կատարեալ իրաւունք ունեն յաղթանակող համարելու։ Գեռ ևս 1902 թ., երբ սոցիալ-դեմոկրատները այնքա՛ն բարեացակամօրէն զիջում էին «ազուութեան» մէջ տեղերող գիւղին իրենց երեւելի «հողամասերը», սոցիալիստ-յեղափոխականները գրում էին. «Մենք պէտք է հողով կոչ անենք գիւղացուն դէպի Ազատութիւն և ազատութեան միջով նրան տանենք դէպի Հողը»։* Եւ մի՞թէ նոյնը չեն ասում հիմա, չորս տարի յետոյ, ուստի սոցիալ-դեմոկրատները մի՞թէ այս րոպէիս այդ չէ նրանց զիրքը դէպի գիւղացիութիւնն ու հողային հարցը...

Մենք կուզենայինք խօսել այստեղ սոցիալիստ-յեղափոխականների և սոցիալ-դեմոկրատների միջև եղած տարաձայնութեան մի ուրիշ կէտի մասին ևս,— այն է այդ երկուսի վերաբերմունքը դէպի տէրօրի նպատակայարմարութիւնը՝ իբրև մի յեղափոխական միջոցի՝ ոստիկանական-բիւրոկրատական կարգերի դէմ կուելու գործում։ Բայց այս անգամ այսքանը բաւական է, մանաւանդ որ յեղափոխական տակտիքի մասին աւելի յարմար է խօսել, երբ մենք կը դիմենք մեր «խաղաղասէր», չափաւոր կուսակցութիւնների տակտիքի քննութեան։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ԿԻՆ-ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆԸ

Նորայրոյն ուսու կին յեղափոխականի ընկերակցացուցիչներից մէկը, օրինոյ Ձիւնիպա Կոնստանտինովա, որի ձեռնով օգոստոսի 13-ին սէրրորի ենթարկւեց գեներալ Մին, Մոսկվայի սխառնակ դահլիճը, իր մահուան դատաւիճակն արձակող դատաւորների առջև արտասանեց հետևեալ յուզիչ նախ, որ դաւանանքն է իր Կոնստանտինովան։

Ես սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան անդամ եմ, և այժմ պատկանում եմ Հիւսիսային շրջանի թաւուցիկ մարտական խմբին։ Ես սպանեցի Մինին։ Պատճառները, որոնք ինձ մղեցին դէպի այս քայլը, հետեւեալներն են։ Կարծում եմ, որ ամբողջ աշխարհը յիշում է դեկտեմբերեան օրերը, երբ Մոսկվայում Մինն ու Ռիմանը գործում էին, որպէս թշնամու երկրում։ Ես երկարօրէն չեմ ծանրանայ այդ օրերի պատմութեան վրայ, շատ խօսեցաւ, շատ գրեցաւ այդ առթիւ լրագրների և ամսագրերի մէջ։ Ամբողջ զբոսը ներկեցին դրան։ Մոսկվայում սպանւածների թիւը հաշուում է հարիւրներով։

Ինչպէ՞ս էին ջարդում ժողովուրդը Մոսկվայում, — ասէ՛ս այն հարցը, որ շատերը տալիս են իրենց։ Որովհետեւ ժողովուրդը, թաղած տգիտութեան և թշաւուրութեան մէջ,

* «Մրագրի եւ ակտիւի հարցեր», ժողովածու «Յեղափոխական Ուսասանակի» յղուանքից, 1903:

խաբած Նիկոլա II-ի գրգռող հրովարտակով և կառավարութեան զրգռիչ քաղաքականութեամբ, բարձրացրեց յեղափոխական դրօշը իր ճնշողների, իր դարեւոր հալածողների դէմ։ Ես սպանեցի Մինին, որովհետեւ նա արատաճների, ազատութեան համար մաքաւող յեղափոխականների սպանիչն էր, սպանիչը այն անմեղների, որոնց արեամբ սուղեց Մոսկվայի փողոցները։

Խաղաղութեան օրերին Մինը զբաղւում էր զինւորների մարզանքով։ Նա ջանք էր թափում յօտենալ նրանց, լուրինել հետները, ազգել նրանց վրայ, զարթեցնել նրանց մէջ ստրկական հնազանդութեան և կոյր անձնւիրութեան զգացումներ՝ դէպի սքրագործ կառավարութիւնը։ Եւ այդպիսով պատրաստում էր լինել ապագայ եղբայրասպաններ, ապագայ հայրասպաններ։ Ես սպանեցի Մինին, որովհետեւ նա, իբրև Անմեծօսովիի գնդի հրամանատար, ներշնչեց գիւղացի զինւորներին՝ բուռն ատելութիւն, ընդդէմ ազատարար շարժման։

Նման Ի. անն Գրոզնուս, Նիկոլայ II իրեն շրջապատել է արբանեակներով։ Մոսկվայի Միներ, Բալտեան Օրլովներ, Տրէպոլներ, «պարօմ» կազմակերպողները — ասէ՛ս նրա գահի շրջապատողները։ Գրանց ձեռքերը շաղախած են ժողովրդի արիւնով։ Սպանելով Նիկոլայ Բոմանովի արբանեակներից մէկին, ես ուզեցի նրան յիշեցնել, թէ իր գահն էլ իր նեցուկների պէս կարող է խորտակւել։

Հարցաքննութեան ժամանակ ինձ հարցրին, թէ ո՞վ է մեզ սպանելու իրաւունք տւել։ Որպէս անդամ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան, ես նոյն պատասխանը կը տամ, ինչ որ իմ նախորդ ընկերները. — կուսակցութիւնը որոշել է կառավարութեան սպիտակ բայց արիւնոտ տէրօրին պատասխանել կարմիր տէրօրին։ Եւ քանի որ ես ժողովրդի զաւակ եմ (համեստ ծագումով, հայրս զինուոր էր, իսկ մայրս գեղջիկուհի), ձեզ պիտի հարցնեմ, ես սեղծ նոյն ժողովրդի լեզուով, իսկ ձեզ ո՞վ իրաւունք տւեց՝ պահել մեզ դարեւոր տգիտութեան, թշաւուրութեան մէջ, փակել բանտերում, ուղարկել աքսոր, ենթարկել տաժանակիր աշխատանքի, կախել ու գնդակահարել տառնեակներով և սպանել հարիւրներով։ Ո՞վ տւեց ձեզ այդ իրաւունքը։ Գուր խեցիք այն, աւելի ուժեղի իրաւունքով, դուք ներքազարծեցիք այն՝ օրէնքով, դարբնած նոյնիսկ ձեր ձեռքով։ Պոպերը օրհնեցին այդ իրաւունքը։ Բայց այժմ հանդէս է գալիս մի ուրիշ իրաւունք, ժողովրդի իրաւունքը՝ աւելի արդար, անկասկած, քան ձեր տմարդի օրէնքը։ Եւ այդ իրաւունքի դէմ է, որ դուք սկսեցիք օրհասական մի կռիւ։ Գուր լաւ գիտէք, որ ձեր տմարդի օրէնքի կորուստը ձեր սեփական կորուստն է, դուք, որ սննդու՞մ էք նրանով, ինչպէս շնագայլը գէշով։ Եւ մենք ժողովրդի զաւակներս, որ պաշար ենք մղում ժողովրդի ազատութեան համար, զգում ենք մեր մէջ ոյժ ու իրաւունք, զենք ի ձեռին յետ խլելու մեր ապագայ իրաւունքը և կուելու ձեր դէմ, որ միահեծան և բիւրօկրատ կամայականութեան ներկայացուցիչներդ էք։

Ես երկարաբան չեմ լինի իմ կենսագրութեան վերաբերմամբ։ Վարժուհիների դպրոցը հաղիւ աւարտած՝ ինձ ուղարկեցին Լիվոնեայի յետ ընկած մի անկիւնը, Էստոնիների երկիրը, որպէս ուսուցչուհի կառավարական մի դպրոցի։ Կառավարութիւնը զբաղւած էր Բալտեան շրջանը ուսուցնելով, և այդ նպատակով՝ հիմնում էր կառավարական դրպրոցներ՝ լի ուսու վարժապետներով ու վարժուհիներով, որպէսզի դասաւանդութիւնը լինի բացառապէս ուսուցիչներ։

Այն երկիրը, ուր ես ստիպւած էի վարժուհու պաշտօն վարել, շատ էլ գրաւիչ չէր. երեք կողմից անտառ և դիմացը՝ Պէյպուս լիճը։ Բնութեան կողմից՝ պատկերը տխուր էր. եղևնիներ և բարտիներ, իսկ բնակիչների թշաւուրութիւնը՝ սարսափելի։ Նրանք հող չունէին։ Ալէքսանդր II-ի հրամանով նրանք իբր թէ ազատւած էին ճորտութիւնից, բայց հող չունէին։ Ամբողջ հողը մնացել էր Բալտեան շրջանի բարօնների ձեռքում. ժողովուրդը ապրում էր միայն նրանով, ինչ տալիս էր լիճը — ձկնորսութեամբ։ Թէև մեծացած աղքատութեան մէջ, ես ապշում էի նրանց թշաւուրութեան վրայ։ Այդ ժամանակ մի միտք ինձ պաշարեց։ Ի՞նչ-

պէս կարելի է ապրել այդ խեղճութեան մէջ առանց մաքառելու լուսադայն ապագայի համար, ի՞նչպէս կարելի է ապրել առանց ապագան լուսաւորող մի ճառագայթի, առանց մուսլ հորիզոնի վրայ պրպտող մի լոյսի:

Սակայն դպրոցից դուրս՝ ես անկարող էի գործել,— ես չէի գիտէի Կոստանտնուպոլսի լեզուն: Գալոցի պատերի մէջ ես տանջուում էի ոչ թէ Փիղիբապէս, այլ բարոյապէս: Ամբողջ դասաւանդութիւնը պիտի կատարէր ուսուցիչները: Որպիտ խորը տանջանքով ես գիտում էի իմ պատիկ աշակերտի դէմքը, երբ պահանջում էի նրանից՝ խօսել միայն ուսուցիչի, և երբ նա ինձ նայում էր իր դժբախտ և լքած հայեացքով: «Ինչո՞ւ համար այս պատերի մէջ ինձ արգելւած է խօսել իմ լեզւով», — ահա ի՞նչ էի կարգում նրա փոքրիկ տխուր աչքերում: Ես տանջում էի տեսնելով, թէ ինչպէս բարձր դասին պատկանող՝ 17—18 տարեկան երիտասարդներ, որոնք չէի գիտէին իրենց սեփական ժողովրդի պատմութիւնը, հարուստ փաստերով և գեպերով, նկարագրում էին Օլգովիչների ու Բիւրիկովիչների միջև տեղի ունեցած կռիւները: Յիշատակելով այս՝ ես չեմ ուզում ասել թէ մի ժողովրդի համար օգտակար չէ իմանալ իր գրացի ժողովրդի պատմութիւնն ու լեզուն: Բայց շնորհիւ այդ ուսուցչական երկրի բարգաւաճումը կանգ առաւ երկար ժամանակով:

Այս ձևով աշխատելով մի ամբողջ տարի Լիվոնիայում, անցյալ Պետերբուրգի նահանգի Պետերհովի շրջանը, գործելու ուսուցչական ժողովրդի մէջ: Այդտեղ պայմանները հետեւեալներն էին: Գալոցի գիմնապարտ էր ուստիկանը, դրպարոցի յետեւում՝ սուրիա գիմնիկը. մտիկ բլրակի վրայ՝ պոպր, նրա կողքին էլ տիրացուն: Եւ շորան էլ իմ մասին տեղեկագրիներ էին շարագրում: Երբ ես կազմակերպում էի ժողովրդի համար զրոյց և ընթերցանութիւն, բարոյական անմեղ բնասարութեամբ, տիրացուն հաղորդում էր վերատեսչին թէ «վարժուհին պարսպում է այնպիսի խօսակցութիւններով ու բացատրութիւններով, որոնք ոչ մի առնչութիւն չունենին դպրոցական աշխատանքի հետ»: Պոպր իմաց էր սայիս ձեռնհաս վարչութեանը թէ վարժուհին խմորում է աղանդներ, սոցիալիզմ է տարածում և փչացնում երիտասարդութիւնը: Այս երբ զբաղւում էի ժողովրդական ներկայացումով, իսկոյն գալիս էր ուստիկանը կամ սուրիա գիմնիկը:

Այն օրից հինգ տարի է անցել: Այդ տեղեկագրի պատճառով ինձ կանչում էին երբեմն վերատեսչի, երբեմն դպրոցական խորհրդի, երբեմն նահանգապետի մաս: Եւ այսպէս՝ երկու տարի ու կէս ես ուսուցչանում էի այդ գիւղում «Աստուծոյ հովանու ներքոյ»: Վերջապէս խորհուրդը ինձ վճռեց վարժուհիութիւնից: Ես թողի այդ պաշտօնը առանց մեծ ափսոսանքի: Իմ կեանքի զանազան ելեւէջների այդ շրջանում եկայ այն համոզման, որ անկարող եմ ժողովրդի հետ բաժանել իմ ունեցած նոյնիսկ փոքրիկ գիտութիւնը, որ ես չեմ կարող նրա աչքերը բանալ՝ իր գրութիւնը տեսնելու համար, մասնանիջ անել իր թշուառութեան իսկական պատճառները: Ես տեսայ, որ այդ օրինակ պայմաններում անկարելի է մտածել մարդու մտաւոր ու բարոյական ներդրանակ զարգացման մասին (ինչպէս ասում է մանկավարժութիւնը), հասկացայ, որ անհրաժեշտ է ստեղծել նախ և առաջ այնպիսի պայմաններ, որոնք թայլ տային՝ մտածել մարդկութեան ընդհանուր զարգացման մասին: Ես գիտակցեցի անհրաժեշտութիւն՝ կուսակցութեան միասնական և կառավարչական բանապետութեան գէտ: Ես դարձայ յետափոխական:

Ուսուցչութիւնից վճռուելուց քիչ յետոյ, ես ձերբակալուեցայ: Ինձ նշմարեցին նախնական բանտարկելութեան և ապա բերդարգելութեան մի տարով: Ապա արձակեցին և երկու շաբաթ յետոյ՝ նորից ձերբակալեցին: Ութ ամիս բանտում պահեցին: Երբ ազատեցին երկրորդ բանտարկութիւնից, ես փախայ արտասահման և ապա Ռուսաստան դառնալով՝ սկսեցի գործել որպէս անդամ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան: Բանտարկութեան ու հալածանքի ազդեցութեան տակ՝ յեղափոխական զգացմանը լիակէս ամբացաւ իմ մէջ: Ես հասկացայ, որ ցարը եթէ

բռնապետ ու դեպոս չէ, առնազն մի անհրաժեշտ գործիք է, որ ժողովրդին պահում է ստրկութեան մէջ: Ռուսական տեսակետով, կառավարել նշանակում է թալանել, այրել, սպանել: Ռուս ժողովրդի պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արեան տարեգրութիւն: Ես տեսայ, որ միահեծան ու բիւրօրաւ կազմը կանգուն է մնում միմիայն շնորհիւ կառավարութեան դաժանութեան, սպիտակ բայց արիւնքատ ակերտի, որոնք գործադրում էին իշխանութիւնը ղեկավարողների ձեռքով: Ինքը կեանքը ինձ բերեց այն համոզման, թէ ոչինչ նոր բան չի կարելի շինել, առանց քանդելու հինը և թէ՛ ինչպէս անկարելի է կանգնեցնել դաժափարները սեփականով, այնպէս էլ անկարելի է յետ մղել սեփաները միմիայն դաժափարներով: Ես դարձայ տ եր օ թ ի ս ս:

Միահեծան ու բիւր կրատ ըժժմը շունչը փչելու մաս է: Ռուս-Եւրոպական պատերազմի ընթացքում՝ իր անյաշարութիւնները ապացուցեցին, թէ իր արեր մայր է միտնում: Հսկանքներեան գործադրութիւնը ուժգնօրէն սարսափեցրին կառավարութիւնը: Երկիրը հանդուստեցնում համար կառավարութիւնը յայտարարեց, թէ նա սայիս է ժողովրդին ապաստութիւն, սակայն մի ձեռքով ապաստութիւն շնորհելով, միւս ձեռքով դիւղերն էր ուղարկում սարսափ ազդող խմբեր, իսկ քաղաքներում կազմակերպում էր Պ օ դ ր օ մ ն ե ր: Ազատութեան այս օտարտի շրջանը տեսել միայն մի ամիս: Նորից սեւեւ ամպերը անցան երկրի վրայով: Ժողովուրդը չէր հանդուստացաւ: Կառավարութիւնը վճռեց՝ հրահրել Գուժա «մարայնները իր փիժած նեցուկները»: Բայց ոչ սեւեւագրերի կազմակերպութիւնը, ոչ այլ ինտրիգներ, և ոչ էլ կառավարական ուրիշ դաւեր չէր կարողացան ընտրել տալ պահպանողական, միասնական Գուժա: Գուժան գումարեց: Նա ազատամիտ էր: Կառավարութիւնը մի առ ժամանակ տարաւ իրաւացի հարաւորները, որ Գուժան շարտում էր դէպի նա: «Հայհայանքները մի ակննով մթանում միւսով դուրս էին դալիս»: Բայց ահա կառավարական համբերութեան բաժակը լեցեց, երբ «գուժայականները» վճռեցին՝ զիմե ժողովրդին մի կ ո չ ո վ, որ պաշտպանում էր մասնաւոր հողերի բռնի գրաւումը: Այս ամիտները խօսեցին, նրանք, որոնք իրենց ձեռքում ունէին վարչութեան ղեկը, յուզեցին և Գուժան լուծեց...

Այժմ մենք նորից անցնում ենք ճնշման մի շրջան: Սակայն կառավարութեան բոլոր շահերը ի դուր են: Ոչ ճնշումներն ու ձերբակալութիւնները, ոչ բանտարկութիւններն ու արտօրները, ոչ պատժի խտացումն և ոչ պոպոժները չեն կարող կանգնեցնել բնութագրող ժողովրդի թափը:

Մի քանի բուպեց դուր ինձ դատապարտելու էր մահաւան: Ի՞նչ արժէք ունի այն ձեռք, որով ես ստիպւած պիտի լինիմ մեռնել կախաղանի վրայ, սաժանակի աշխատանքի մէջ, թէ հարցաքննութեան սենեակում — ամեն տեղ ես կը մեռնեմ՝ միևնոյն մտածմունքով: մնաւ բարով իմ ժողովուրդ, ես կարողացայ տալ քեզ իմ կեանքի մի փոքրիկ մասը միայն: Բայց ես կը մեռնեմ լի այն հաւատով, թէ պիտի հասնին՝

... օրերն ապագայ,
երբ կը կործանելի գահը երբեք,
Եւ երբ ուսական մեծ դաշտի վրայ
Ծագի փրկութեան արեւը փայլուն:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ը

Ե Ր Ե Ս Ո Ւ Ն Ց Ա Ր Ի Ա Ր Ա Չ
(Վ Ե Ր Գ)

Յիշեալ տեղեկագրին մատուցած թուականէն ի վեր (11 ապրիլ 1872) հարստահարութեանց համար Պատրիարքարանէն գրւած թագրիւններն ալ ինչպէս կերեւին Չեր յանձնախմբին պատրաստած հաւաքածոյէն, կամ

պաթթալ ըլլալով կամ անպատասխանի թողնելով և կամ խթիլամի ապարդիւն գրութեամբ յետաձգելով և առ առաւելն՝ կեդրոնական Վառաժարութենէն առ գաւառական ուղղեալ հրամանագրաց անգործագրելի մնալովը՝ մոռացութեան մէջ թաղւած են, առանց դարձան տանելու ժողովրդեան կրած տառապանաց:

Իրաց այս աղէտալի և անհանդուրժելի վիճակին ամենամեծ պատճառ՝ հաւասարութեան գաղափարին Իսլամ ժողովրդեան մէջ չընդհանրանալն և արդարութեան անխտիր չգործագրելն է: Վառառական վարչութեանց գլխաւորաբար ստորագաս պաշտօնէութեան մէջ մուտ գտած ապիկար անձինք՝ տգիտութեամբ, նախապաշարմամբ և զօշարաղութեամբ՝ ո՛չ հաւասարութեան սկզբունքն ընդհանրացնելու գործին մէջ յաջողակութիւն ցոյց տւած են, և ո՛չ ալ արդարութիւնն անխտիր մատակարարելու տրամադրութիւն, մինչդեռ իրենց նւիրական պարտականութիւնքն էին ասոնք, ինչպէս մեր նորապսակ Սուլթանն ալ իւր Խաթթը Շէրիֆին մէջ բացայայտ կերպիւ կրտէ:

«Մեր միակի փափաքն ու մտածմունքըն է ազատութեան, անգործութեան և արդարութեան բարիքն առանց բացառութեան մեր ամեն հպատակաց վայելել տալ. քաջայոյս և աներկմիտ եմք որ Մեր Տէրութեան նախարարներն և ամէն պաշտօնատարներն ալ մեր օրինակին հետեւելով՝ այս բաղձանաց կատարմանը պիտի գործակցին»:

Չեր յանձնախումբը կը կարծէ թէ՛ յիշեալ խաթթին հրատարակութեան վրայ, ճիշտ ա՛յն միջոցին, որ Վայսերական Վառաժարութիւնն երկրին քրիստոնեայ ժողովրդոց վիճակին բարւոքումն իւր բոլոր հոգածութեան նիւթ ըրած է, ժամանակ է որ 1872-ի ընդհանուր Տեղեկագրի պատրաստութենէն ետե՛լ՝ հարստահարութեանց համար գրւած թագրիւններուն սոյն հաւաքածոյ ցուցակը՝ յիշեալ Տեղեկագրի պատճէնին կցելով՝ Ազգային կեդրոնական վարչութեան ձեռք մատուցելի բարեխնամ Վառաժարութեան, և խնդրել որ վերոյիշեալ հարստահարութեանց իսպառ բարձման համար շնորհ ընէ նկատողութեան առնուլ զանոնք և պարունակած խնդիրներն ի գործ դնել:

Տարակոյս չիայ որ Ազգային Պատրիարքարանն զԲ. Դուռն այսչափ կրազեցուցած չպիտի ըլլար իւր գանգատանաց և բողբոյ թագրիւններով:

1. Իթէ ներկայ չարեաց իբր դարձան՝ Բ. Դրան երբեմն ձեռնարկած բարեկարգութիւններն աւելի ընդարձակ հիմանց վրայ դրւած ըլլային, և՛ գաւառական պաշտօնէից մէջ անձեռնհաս և մոլեռանդ անձինք չգտնւելով՝ անընդհատ գործագրէին, նա մանաւանդ՝ եթէ արդէն բամբասեալ բնիկները պաշտօնէութեան կոչւած չըլլային, որք հայ ժողովուրդը ճնշեալ տկար և աղքատ պահելու բնական հակամիտութեամբ՝ միակերպ աղէտ են թէ՛ երկրին և թէ՛ մեր ժողովրդին և եթէ երկրին բարիքը խորհող և կրօնական ու քաղաքական անխտրութիւնն իրապէս ի գործ դնող ձեռնհաս պաշտօնեայք ա՛լ առանց յանցանաց պաշտօնակութեան ենթարկւելէ ազատ մնալով՝ իրենց ձեռք առած բարեկարգական միջոցները շարունակել կարենային:

(Այս կարգի պաշտօնէից ազատամտութիւնը միշտ իւր արդիւնքը տւած է, և Պատրիարքարանի արձանագրութեանց մէջ ալ իւր հետքերն ունի: Ս. Պատրիարքի մասնաւոր գրութիւնք իսկ բաւական եղած են՝ արդարակորով պաշտօնէից՝ կարեւոր խնդիրներ կարգադրելու և զրկելոյն հատուցումն ընելու):

2. Եթէ վիլայեթի, Մութասարրըֆութեան և Վայսմագաւութեան Արքունի ժողովոց կազմութիւնն աւելի ժողովրդեան վստահութիւնը գրաւելու եղանակաւ կատարէր, անոնց անգամոց բաշխումը՝ տեղոյն բնակիչ զանազան Ազգաց թուոյն համեմատութեամբն ըլլար, և հայ անգամոց ընտրութիւնը մեր Ազգային գաւառական վարչութիւններէն ծագումն առնուր:

(Բարեբաղդ եմք ըսելու թէ՛ վեհափառ Վայսեր իրատեով մեր Ազգին շնորհեալ Սահմանագրութեան համաձայն՝ մեր Ազգային գաւառական վարչութիւնք՝ մինչև իսկ գիւղականք՝ սահմանագրապէս կազմակերպեալ և ժողովրդական քւէարկութեամբ ընտրեալ ըլլալով, ժողովրդին համարատու են և ըստ այնմ անոր վստահութիւնը լիովին կը վայելեն):

3. Եթէ մեր գաւառական Ազգային վարչութեանց և Առաջնորդաց առ Տեղական Վառաժարութիւնս ուղղած խնդիրներն ու դիտողութիւններն աւելի լրջօրէն նկատողութեան առնւէին տեղական ատեաններէն, որով ի Պոլիս գանգատներ տեղալու և Պատրիարքարանին ու Բ. Դրան այսչափ տագնապ պատճառելու տեղի չմնար:

4. Եթէ քրիստոնէից վկայութեան կնճռոտ խնդրոյն լուծման գոնէ ամենագիւրին եղանակն ի գործ դրէր, այն է՝ ոչ-մահմետականաց բոլոր առևտրական, ոճրագործական և կալւածական գատերն ամեն պարագայի մէջ չիզամի ատեաններուն առջև դատուէին:

5. Եթէ՛ տեղ տեղ բռնացող քրդերն, աւշարներն ու Տէրէպէյի թուրքերն իրենց որջերէն հեռացուցելով պատժէին, և ապստամբ վրանաբնակները հպատակ գիւղաբնակներ դառնային. եթէ հայ հողագործին յափշտակեալ արտ, կալւած և այլ սեփականութիւնքն իրեն վերադարձէին, և զանի՛ կեղեքող ձեռքերէ, տրոց ծանրութենէ և անիրաւ պահանջումներէ զերծ պահելով, հող ունենալու իրաւունք, աշխատելու դիրութիւն և ճակտին քրտանց արդիւնքը վայելելու ազատութիւն տրւէր իրեն:

Այսուամենայնիւ մեծայոյս եմք մեր նորապսակ Օգոստափառ Սուլթանին հայրական ջանից և հոգածութեանց վրայ, բանզի այս վեհապետն երկրին աղէտը մատնանիչ ցոյց կուտայ իւր բարենշան Խաթթին մէջ ըսելով թէ՛

«Ներկայ տագնապալից վիճակն օրինաց թերի գործագրութեանէն և վարչական գործոց մէջ իւրաքանչիւրին անձնական հաճոյից իբր և կանոն բըռնւելէն յառաջ եկած է...»

Եւ թէ՛ «Այսուհետև կարող և ձեռնհաս անձինք պաշտօնի պիտի գործածուին...»

Թէ՛ «Ամեն աստիճանի պաշտօնատարք պատասխանատու պիտի լինին...»

Եւ դարձեալ թէ՛ «Մեր գաւառականց տա-

կաւին անհատական իրաւունքներն ապահովելու կարող չըլլալն՝ օրինաց կանոնաւորապէս և յարատեւութեամբ չգործադրելէն յառաջ եկած է...

Բարձրէն եկած այս խօսքերուն յուսադիր՝ քաղցր է մեզ հաւատալ թէ՛ ապագային մէջ այլևս հարստահարութեանց այսպիսի հաւաքածոյներ պատրաստելու նիւթ չպիտի ունենանք: Վասն զի Բ. Գունն ի հարկէ մեր վերոյիշեալ խնդիրներն այս անգամ աւելի ուշով նկատողութեան պիտի առնու և փութով գործարդէ: Անոնց գործարդութիւնն՝ ամեն տեսակ զեղծմանց և հարստահարութեանց ազգիւրը ցամբեցնելով՝ գաւառացի հայուն ինչքը, պատիւն ու կեանքը պիտի ազատէ, ինչպէս և երկիրն յառաջդիմութեան շաւղին մէջ դնելով՝ օր քան զօր պիտի բարգաւաճէ զայն և հարստացնէ:

Հայ Ազգն՝ իւր տառապանաց բարձմանն ակնկալու՝ վերտողեալ միջոցները կառաջարկէ, վասն զի արդարութեան և հաւասարութեան շնորհն անխտիր վայելելու իրաւունք ունի՝ թէ մահմետական և թէ ոչ-մահմետական միւս հպատակ Ազգաց չափ: Վասն զի հայն

իւր դարաւոր հաւատարմութեան անժխտելի փորձեր տւած է անդադար կայսերական կառավարութեան. հայն՝ իրեն գծւած սահմանին մէջ՝ ամէն կարելի ծառայութիւն ինքնայորգոր մատուցած է միշտ Օսմանեան Պետութեան. և վերջապէս հայն՝ իւր ապագայն այս երկրին ապագային մէջ կը փնտռէ, և իւր ամէն խնդրածն իրեն և երկրին միապէս օգտակարն է, համաձայն իւր Օգոստոսիան Ա. հասկերտին բարի դիտաւորութեանց:

Չեր Յանձնախումբն, իւր պաշտօնն այսպէս կատարելով, կողաչէ որ եթէ երբէք իւր տեղեկագրին մէջ թերութիւնք նշմարէ Ազգային Ժողովո՞ր՝ ներողամիտ լինի, ի նկատի ունենալով որ սոյն գործին համար սահմանեալ ութօրեայ կարճ միջոցը ժամանակ չէր թողուր նիւթապէս ասկից աւելին պատրաստելու:

17 սեպտ. 1876.

Ստրագրոսիւնն,

Մասքեա եպիսկոպոս Իզմիրեան (ասեմայեթ), Կարայեթ եպիսկոպոս Սերոբեան, Յովհաննէս Բահանայ Մլրեան (պսրիբկն փոխանորդ), Յ. Մերեթ-Գիլի (ասեմադպիր), Տ. Գէսիմայեթեան, Կ. Ա. Իսթիքեան (խմբագիր «Մասիս» լրագրոյ), Ա. Պ. Պ. Փափագեանց (Տեղեկաբեր):

Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ա Գ Ա Ր Զ Ն Ե Ր Ը

ՆԻԻՐ ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՌԻՅԱՆ ՀԵՐՈՍԵՐՈՒՆ

Նահատակւածներու շատ մը դիակներ կան Փինլանտական ծոցին մէջ: Վերջին օրերս, ալիքները Պետերսօփի մօտ ափ են հանած 11 դիակներ, որոնց զուխները պարկերու մէջ էին փաթթուած և կուրծքերուն վրայ գնդակներու վէճքեր կային:

Հեռագիր Պետերբուրգից (3 հոկտ. 1906)

Ահա նորէն եկեր են Ամոնք՝ հսկայ Ծարաւիները դիւցազմական մահերում՝ Հայրեմաճուէր ընդհարումներու Ուխտեալները, Նախավկանները, Ամմահները... Եկեր են Ամոնք ծովի յատակներէն, մոխրագոյն ծովառիւծներու վրայ, Ու բաշերուն հետ իրենց ծակուած կուրծքերը թնդանթններու երախներուն ցցած՝ Մահէն պայծառացեալ մայրաւորներով երիբովի սաղմոսը կը շեփորեն պարիսպներու շուրջը...

Եկեր են Ամոնք, ծովէն թարմացած ու մահէն զեղեցկացած՝ Մահապարտները երէկին ու Աստուածները Այսօրուան, իրենց ամխոցելի մարմինները անգամ ո՛րալ, ու հագա՛ր անգամ, Ռ՛վ Արքայ, Ռ՛վ Դահիճ, Ռ՛վ Հեղբայրասպան, Կառափնատներու, կախադաններու և մահուան սիւներու ընծայարբերելու...

Ամոնք այլևս չեն յորջորջիր ո՛չ Շմիդտ, ո՛չ Կալայեվ, Ռ՛չ Տէր-Մկրտչեանց, ո՛չ Կոնօպիլիանովիկովա, ո՛չ Մագուրին... Ամոնք պատասխանն են յագեցած ծովին ու պատգամները անգոր մահին, Ամոնք Հեզմութիւններն են Չիռուորսկան Ատեաններու արիւմարքու, Ամոնք Արևներն են, որոնք Դու հրացաններովդ սպանուած կարծեցիր: Ու այսօր ծովէն վերաբշարուած, աւելի պայծառ, մորէն քեզի՛ կուգան, Եւ դու Ամոնց լուսաւոր մայրաքէն Կայէնիմ պէս կը փախչիս, Բայց Ամոնք քեզի պիտի սպասեն պալատիդ առաջ ու պարիսպներու տակ, որպէս պահակ Բոլոր առաւօտներուն ու բոլոր գիշերներուն հետ մտերմաբար, Ահեղ ու ամխոցելի բանակին Գերեզմանադարձներու, որ ծովերէն պիտի գայ, Որպէս փոթորիկը յաղթական, ու որպէս դատաստանդ վերջին, Ու դու քո հետաւոր խուցէղ Ամոնց քալերուն ծայմը պիտի առնես, Ու ականջալուր պիտի ըլլաս Ամոնց մահէն հօգրացած Չայնին, Որ այլևս Արդարութեան ծայմն է, Հաշիւին ծայմն է, Աստուծոյ ծայմն է, Ու դու Աւազանիներէդ լքուած՝ սարսափէն պիտի գալարիս: Իսկ այդ Չայմը պարիսպներդ պիտի ծամէ իր պողպատէ ծնօտներով...

Ու այդ ատեն է, որ Անոնք դուռներէդ ու պատուհաններէդ ներս պիտի խուժեն,
 Մահ սփռելով պիտի անցնին Սրահներէդ ու Դահիճներէդ,
 Քեզ պիտի փնտռեն, ու պիտի գտնեն թագստամոցիդ մէջ,
 Ու դու վախելդ պապանծած՝ գետնաքարը գթութիւն պիտի աղերսես,
 Ու Անոնք քեզ չը պիտի գթան, ինչպէս դու Իրենց չը գթացիր...
 Դո՛ւրս պիտի քաշեն քեզ շնագայլի մը պէս դէպի հրապարակ,
 Ուր պիտի սպասեն ամծայրածիր ամտառները քիմախնդիր հպատակներուդ.
 Անոնց արհաւիրտ Քրքիչը պիտի լսես, ու ծնած օրդ եօթն անգամ անիծես...
 Այնտե՛ղ, Մօրդ ու Հարսիդ ու Ջաւակիդ մահաւմ գալարումները աչքերովդ պիտի տեսնես,
 Եւ Յուդայի չարչարանքներուն ու անոր Վախճանին պիտի նախանծես,
 Քայց քու Մարմինի վրայ պիտի փորձուին այն բոլոր մահակերպերը,
 Որոնցով դու հայրենիքիդ Մեծ ու Անբասիր գաւակները գերեզմանցիր...
 Քու Բերանդ պիտի գայ այլացեղ ու այլակրօն ժողովուրդիդ Գարշապարիմ տակ,
 Ու անոր արհուլի Մաղրն ու Հայհոյանքը մարմինդ պիտի պատանքէ...
 Ու դու պիտի մեռնիս Իժի մը պէս, ու վրադ լացող չը պիտի ունենաս...

Այդ օրը Դիակիդ շուրջը Այրիները պիտի պարեն,
 Ու Կոյրերուն աչքերը պիտի բացուին Վախճանդ տեսնելու համար,
 Անդամալոյծները ոտք պիտի ելնեն Դիակիդ քար մետելու,
 Համրերը լեզու պիտի առնեն Յիշատակդ անիծելու,
 Եւ Խուլերը պիտի լսեն զոհաբանական աղօթքը Յարութեան զանգերուն...
 Կովկասը մահդ պիտի տօնէ հիմաւուրց Գինի լի սափորը ձեռքին,
 Ու Լեհաստանի Խոցերէն ձիւնաթոյր Շուշաններ պիտի ըմծիւղին,
 Սիպիւրը իր Շղթամերը դիակիդ պիտի մետէ Գսակի փոխարէն,
 Ու Ֆինլանտեան իր սգաւոր Այրիութեան քօղը պիտի այրէ,
 Իսկ Ազա՛տ ու Ահա՛ւոր ու Մա՛յր Ռուսաստանը քեզ պիտի ուրանայ...

Ու յետոյ բոլորը եղբայրացած, ընդհանուր Հայրենիքի հողին վրայ ծնկաչոք,
 Ազա՛տ ու խաղա՛ղ ու արգաւա՛նդ Աշխատանքի առաւօտեան շողերուն մէջ
 Իրենց ուրոյն լեզուներով ու բարբառներով Հաւասարութիւնը պիտի երգին:

ՎՍԱՐԱՆԴԻ

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

„Դրօսակի“ խմբագրութիւնը սոսցաւ հետեւեալ նամակը
Ս Ի Ր Ե Լ Ի ք ա զ ա ք ա ց Ի ն Ե Ր,
 Հաստատում եմ ստացումը հազար Փրանկի, որ ուղարկել էք ինձ՝ յանուն Հ. Յ. Գաշնակցութեան՝ յօգուտ „HUMANITE“-ի: Իմ աշխատակիցների և իմ կողմից յայտնում եմ ձեզ շնորհակալութիւն այդ առաքման առիթով, և խնդրում եմ ձեզ՝ բարեհաճել հաղորդելու Գաշնակցութեան մեր շնորհակալիքը՝ համերաշխութեան այս ակտի համար:
 Ընդունեցէք, սիրելի քաղաքացիներ, իմ եղբայրական ողջոյնը:

ԺԱՆ ԺՕՐԷՍ

Հ. Յ. Գ. Վասպուրականի Կ. Կ. հրատարակել է հետեւեալ կոչը:
 „Հ ա յ Ր Ե Ն ա կ Ի ց ն Ե Ր!
 „Անշուշտ լուցիք բանտի վերջին բռնութիւնների մասին. պաշտօնեաները՝ ազատութեան մարտիկներին վերջնական կերպով ճնշելու և բարոյապէս սպաննելու համար առէն տմարդի միջոցների դիմել են և դիմում են: Գրա գործնական արդիւնքը ամբողջ հասարակութեան առաջն է. այսօր բանտում ունենք քսանեօթն վիրաւոր հայ ընկերներ, իսկ գերեզմանատանը մի թարմ գերեզման... Ճիւղները իրենց նպատակին հասնում են: Հասարակութիւնը անտարբեր չպիտի մնայ և չմնայ: Ամէնքս յուզեցինք. ամէնքս լայնիք. ամէնքս պատրաստեցինք սեւ բան անել. բայց այդ բոլորով ո՛չ մի գործնական դարման չարինք ընկերների վերջերին: Խօսքերից և զգացմանքներից աւելի, բանտի ընկերները գործ են պահանջում՝ հեռացումը լիբր պաշտօնեաների և նիւթական աջակցութիւն՝ բժշկութեան, սպորտի, դատական և այլ ծախսերի համար: Առաջինը որոշ մարդիկ անում են: Մտումէ երկրորդը. իսկ այդ էլ ձեր բաժինն է. շտապեցէ՛ք խօսքից գործի անցնել և ձեր լուսաներով օգնութեան հասնել թշուառներին...“
 Արդիւնքը եղել է՝ 10,000 դահեկան:

Մեր յեղափոխութեան նախամարտիկներից մէկը, Սարգիս Կուկունեան, որ երկար տարիներից իվեր աքտրուած էր Սիբիր, ազատուած է և վերադարձած Թիֆլիս: Գործելու առաջարկէր այժմ աւելի լայն է և գրաւիչ, քան 90-ական թւականներին, և մենք անտարակոյս ենք, որ մեր հանրաձայնօթ ընկեր-յեղափոխականը վերստին կը տարւի իր փայփայած զաղափարներով և սիրած գործով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴ

Ա. Զ. Դ

Ժլատի շրջանում վերջերս երևան էր եկել Հ. Յ. Դաշնակցութեան Արևելեան բիւրօյի կեղծ կմիք և դրոշմատետր, որով հաւոր-Պետրոսները շահագործում էին Հ. Յ. Դաշնակցութեան անունը:
 Հետամուտ լինելուց յետոյ՝ օգոստոս 9-ին, կողակների իլիմկա գիւղում ձեռքակալեց՝ ֆելդշերի դիմակի տակ պտտող շանտաժիստներից ամենագլխաւորը, պարսկաստանցի Գէորգ (Եգոր) Օրդուեվը՝ Նմի-Գալէ կեղծ անունով, ու իրատոմսեր և կնքած շնորհակալական նամակներ գրելիս: Խուզարկութեան ժամանակ նրա մօտ գտնեցան մի շարք կեղծ դոկումենտներ՝ Հ. Յ. Դաշնակցութեան Արևելեան-Բիւրօյի կեղծ կմիքով, անդորրագրերի մի տետր և միմէկ իսկ Արևելեան-Բիւրօյի կեղծ կմիքը: Թէ դոկումենտները և թէ իր խոստովանութիւնը ցոյց տւին, որ այդ յամուղով խաչագողը միմէկ վերջին ամիսը՝ գործելիս է եղել Ռուսաստանի խորքերում՝ Օրլով, Կազան, Սամարա, Յարիկցիմ և ապա անցել է Հիւսիսային Կովկաս, և իբրև մշտական կեմտրոն իր համար՝ ընտրել է կողակների իլիմկա գիւղը: Անդորրագրերից երևում է, որ վերջին մէկ ամսւայ ընթացքում այդ կեղծաւորը հաւաքել է մօտ 800 ըուրլի դրամ:
 Վերոյիշեալ խաչագողութեան և աւագակութեան համար Օրդուեվը ստացաւ իր արժանի պատիժը կազմակերպ

պուժեան X Կ. Կոմիտէի կողմից, օգոստոսի 9-ին Իլիմկա գիւղում ենթարկւելով տէրորդի:

Այդ, զգուշացնում ենք զամազան խաչագող եզոր Օրդուեկներին՝ յետ մնալ այդ տեսակ յանդուզմ և զազրելի քայլերից, և միաժամանակ յայտնում ենք, որ ոչ որ այդ օրինակ Օրդուեկներից զերծ չի մնալ Հ. Յ. Դաշմակցութեան նոյնօրինակ պատժից:

Հ. Յ. Դ. X. Կենտր. Կոմիտէ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Արեւմտեան Ռուսի ստացած է՝

Չ Լ ի ց Ե ր ի ա.—Եւր երկու Բոլշեից 10 ժամ: Ռ ու ս ա ս ա ն.—Դրամ՝ կոմիտէից 7500 ժամ: Գ Ե ր մ ա ն ի ա.—Կարմազայ Ա. Ի. Ի միջոցով (Եւր Դաշմակցութեան 90 մարտ, Վարանդայի օգին 33 մարտ) 151 ժր: Ե Գ ի Կ Տ Ո Ա.—Դանիւր՝ Ռ. Գրչասուէ Հ. Բայագաթի միջոցով (1 սեպտ. ոսկի) 25 ժր. 50 սանս:

Ըրդն. գումար 7686 ժամ 50 սանս:

Մրգաստանի կենտր. Կոմիտէ՝

Շարունակութիւն N° 9-ի:

ԳԱՒԱԿԱՄԱՍԻ ՇՐՂ.՝ Թառ գիւղ 30, Բաղամամայից 169. 62, Բաղամամայի 762. 30, Թառ գիւղ 33. 45: Դումար 995 ր. 37 կ::

ԳԱՍԱՆԻ ՇՐՂԱՆ՝ Հետեւել գիւղերից Բասախ 1994. 10, Իխարան 584. 76, Յամալ 74. 80, Բոցայ 20. 36, Նորաէն 26. 70, Անանուն 48, Ջարքի 51. 90, Գեսակ 129. 74, Միգր 30. 65, Կամուր 67, Արօր 206. 15, Շախերդ 105. 55, Ուկիանոս 76. 60, Ապառա 301. 53, Մեծեղիսեայ 82. 31, Ծմակ 74. 60, Տերեւաւար 109. 93, Կնդակ 120. 85, Լին 22. 20, Փոքեղեւայ 123. 15, Կարուսակ 31. 5, Սաման 87. 15, Անդալար 33. 75, Արագած 10. 20: Դումար 4413 րուրի 6 կոպէկ:

ԳԱՐԱՆԵՐԻ Ի ՇՐՂ.՝ Հետեւել գիւղերից՝ Սեբաքարեղ 379. 19, Աւարայր 95. 85, Իւնդզաղ. օձասար 59. 47, Արախ 57, Շաւարան 260. 12, Դաւաւայր 27. 15, Հայկեան 60. 34, Միջագե 337. 5, Մեղրան 15. 60, Էս 4. 95, Կարնաղիւր 160. 25, Սրբալար 16. 70, Գեսախ 10. 30, Հնոց 10. 55, Բլուր 9. 80, Չորակ 14. 20, Անսառ 31. 30, Կարան 6. 5, Բարաբեղ 275, Լեւնգալար 66. 45, Դուա 5. 5, Վրէժ 7. 15 Կ. Տալան Բաղալ 789. 55, Կ. Տալանի Երանից 24, Միջագե գիւղից 10. 30: Դումար 2733 ր. 37 կ::

ՀՈՎԻՏԻ ՇՐՂԱՆ՝ Հետեւել գիւղերից՝ Հովիտ 646. 85, Շոք կամ Պրաւոր 483. 10, Ազգակ 203. 25, Մեծակամուր 47. 1, Շէն 100, Կիրն 16, Կնոց 11. 15, Ճալապաս 57. 20, Եւրեղեղ գիւղից՝ Չորից 750, Չակից 500, Ա. Ա. Ից 100, Յոյսից 50, Աբոյից 50, Շանից 50, Աւօրից 100 Կ. Ա. Օ. Ե. Ից 5, Մրանդեանից 500: Դումար 3669 ր. 56 կ::

Ընդհանուր գումար 55951 ր. 26 կ::

Մանթա.—Նւնդաւուրութեան ներկայ ցանկէն մաս մը—1903 սեպտ. 15—1 փետր. 1904—հրատարակւած էր 1904 տարւան N° 7 «Դրոշակով» և որով զումարն էր 3990 րուրի և 30 կոպ: Չնդշիւղով յիշուալ զումարը ներկայ ցուցակէն կը մայլ Հոգհ. գումար 31,961 ր. 6 կ::

Պալմանեան Կեդր. Կոմիտէ՝

Յիւլիանի կոմիտէն՝ մարտ 25-էն մինչև 7 օգոստոսի: Դարոցի պնակի հասոյք 5 լէվ, Բնկերական երեկոյթի Կապաս բանարկեաներու 36, Բանարկեաներու ինկաս սերկայացումէ 178. 85, Ապառիկներէ 57, Վ. Մանուէլեանի աւակներուն երկու յումարէն 122. 50, Վարդգես յ. 19. 50, Օր. Կարմիր խաչի ք. սանեակէն 15, Թ. Պազարբաղի Բինայի յ. 25. 50, Հրայր յ. 33, Օրդ. Սօսի-Այծեան յ. 32. 50, Պօրխոյեղեանի Շմառնեան յ. 220. 10, Հերուլ Գաղիկ յ. 52, Տարոն յ. 22, Օր. Կարմիր խաչ ա. սանեակէն 10, Օր. Կարմիր խաչի ք. սանեակէն 12, Վասպուրական յ. 68, Հերուլ-Գաղիկ յ. 39, Օր. Կարմիր խաչի ք. սանեակէն 28. 50, Օր. Սօսի-Այծեան յ. 13, Օր. Կարմիր խաչի ք. սանեակ 17, Արամեան յ. 64, Արեւիկեան յ. 26, Հրայր յ. 39. 40, Տարոն յ. 21, Լարանէ գոյացած հասոյք 11. 55, Յար. Փաչայեանէ 6. 4. Է. 100, Վարդան Մամիկոնեանէ 20 Լ. ոսկի: Դումար 1294. 60 լէվ:

ՊԱՅԱՅԱՅԻ Ենթակոմիտէն՝ Մրնարանի հասոյք 1000 ժամ, երկար 2. Սոխակ 8, Արագիլ 5, Մեդր 5, Բագէ 5, Աղամանդ 10, Վիթիլարի 4, Հայդուկ 5, Շախ 5: Դումար 1049 ժամ:

ԴԱՆՈՒԲ Ենթակոմիտէն՝ ապրիլ. մայիս և յունիս մուտք, Արարս ընթերցարանի հասոյք 479 ժամ 65 սանս. Տիկ. Կարմիր խաչի զանգուակէն 114. 95, Կարին յ. 21, Արամ յ. 21, Մերք-Արքիւր յ. 27, Վարագ յ. 33, Նոր դար յ. 40, Ջինատր յ. 18, Մեղայի յ. 24, Նէրուր յ. 16, Տրդաս յ. 24, Հագուլ յ. 39, Արարս յ. 15, Սիւպուր յ. 55, Տարոն յ. 23, Մասիս յ. 52, Տիկ Արամ յ. 16. 50, Դայլ յ. 21, Վահանէ 5, յունար, փետրար և մարտ ամիսներէն զանաւոր ապառիկներ՝ 586. 65: Դումար 1631. 75 ժամ:

ԿԱՒԱՅԻ Ենթակոմիտէն Վերուկի յ. 104 ժամ, Արծիւ 71. Տարուրիկ 27, Տարոն 34, Դայլ 75, Արեգակ 29, Արարս 60: Դումար 400 ժամ:

Ընդհանուր գումար 3080, 75 ժր., և 1294, 60 լէվ:

Վ. Ի. Վ. Լեւոնտիս յունար՝ մայ.—սեպտ. Սիգախ 375, դան., Տոլակ 180, Զաւէն 485, Վարդգէն 170, Հուման 25: Դումար 1235 զան:

Հ Ա Յ Յ Ե Ղ . Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ի Ն Ե Ն Ե Ր Ը

Table with 2 columns: Item number and price in dr. u. (e.g., 1. Ապաստման ոգի (սպառւած) 10)

Մ Ե Ծ Ա Դ Ի Բ Պ Ա Տ Կ Ե Բ Ն Ե Բ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶՏԱՄԱՐՏՐԸ — ալլէգորի — հատը 1 Ֆր. ԿՕԶԱԿԱՅԻՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ (Ֆրանս. ծանօթութեամբ) — 50 ս.

Table with 3 columns: Item name, price, and quantity (e.g., Սերոբի, Թորգոմի, Պետոլ, 50 սանտիմ, իսկ սերին (13 հատը) 5 Ֆր.

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ Ն Ե Բ

«Հայկական ազատամարտը», «Ֆինլանդիա — Կովկաս» (ալլէգորի) և հետեւեալ յեղափոխական հերոսների պատկերներով.

Table with 3 columns: Item name, price, and quantity (e.g., Վազգէնի, Սերոբի և որդոց, Կայծակի, Կետոլի, 50 սանտիմ, իսկ սերին (20 հատը) 1 Ֆր.

Դիւնել՝ «Դրոշակի» խմբագրութեամբ, Ժըմեվ: